



Երևանի պետական համալսարանի  
ուսանողների և դասախոսների  
իրավունքները և դրանց իրացումը

ԴԱՎԻԹ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Սույն հետազոտությունը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի ամբողջական ֆինանսական օժանդակության շնորհիվ՝ քաղաքականության հետազոտությունների կրթաթոշակներ ծրագրի շրջանակներում: Չեկոյցում տեղ գտած վերլուծություններն արտահայտում են հեղինակի տեսակետը և կարող են չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի դիրքորոշումների ու տեսակետների հետ:

## Բովանդակություն

Ուսումնասիրության նկարագրություն .....	3
Մեթոդաբանություն .....	4
Ուսումնասիրության արդյունքների քննարկում .....	5
▪ ԵՊՀ Ուսանողական խորհուրդ .....	5
▪ ՈԻԽ քաղաքականացվածությունը, Հայաստանի Հանրապետական կուսակցության ազդեցությունը ԵՊՀ ուսանողների ինքնակառավարման վրա .....	11
▪ Որակական տվյալների վերլուծություն .....	17
Եզրակացություններ .....	23
Առաջարկություններ .....	24
Հավելված 1 ԵՊՀ ՈԻԽ Կանոնադրություն .....	27
Հավելված 2 ՈւԽ Միջոցառումներ 2015-2017թթ. ....	0
Հավելված 3 Ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոն 2015-2017թթ. ....	0
Հավելված 4 Փաստաթղթեր .....	0

## Ուսումնասիրության նկարագրություն

Երևանի պետական համալսարանը (ԵՊՀ), հանդիսանալով ՀՀ Մայր բուհը, առաջնային նշանակություն ունի հանրապետության գիտակրթական կյանքում: ԵՊՀ-ի բնականոն գործառնման համար կարևոր նշանակություն ունի ԵՊՀ-ում ուսանողների շահերի և իրավունքների պաշտպանությունը: Համալսարանում ռեֆորմների անկատարությունը, կոռուպցիայի դեմ պայքարի իմիտացիան ու առկա խնդիրներին լուծում տալու կամքի ցածր մակարդակը ցույց են տալիս, որ առկա խնդիրներից շատերը բավարար լուծում չեն գտնում կամ բացակայում է անհրաժեշտ պատրաստակամությունն ու ներուժը առկա մարտահրավերներին դիմագրավելու համար:

Վերջին տարիների ընթացքում բազմաթիվ գործոններ նպաստել են համալսարանում մի իրավիճակի ստեղծման, երբ ուսանողները դժգոհ են տրվող կրթությունից, դասախոսները՝ պայմաններից, ուսանողների մոտիվացիայից ու վարքագծից: Նման գործոններից են խորհրդային ժառանգությունը, նախկին կառավարության արատների հետ սերտաճած սին պահպանողականությունը, կոմֆորմիզմը, նորի ու քննադատական մտածողության նկատմամբ մերժողական, ուսանողավանող վարքագիծը: Համալսարանի տարբեր ենթակառուցվածքների գործունեությունն ու կահավորվածությունը, դասախոսների ցածր աշխատավարձը, ուսանողին ամեն գնով համալսարանում պահելու ցանկությունը նպաստում են մայր բուհի վարկանիշի անկմանը: Այս հետազոտության հեղինակի<sup>1</sup> և իր ուսանողական ընկերների փորձը ցույց են տալիս, որ ուսանողները հաճախ բախվում են տարաբնույթ խնդիրների, որոնց մեծ մասը արհեստածին են, ինչպես նաև ուսումնական գործընթացի հետ կապ չունեցող:

Այս հետազոտության նպատակն է վեր հանել համալսարանի ոչ արդյունավետ գործառնման պատճառները, հավաքագրել փաստարկված տվյալներ իրավիճակը գնահատելու և առաջարկություններ ձևակերպելու համար: Այս հետազոտության արդիականությունը պայմանավորված է համալսարանական միջավայրը առողջացնելու անհրաժեշտությամբ: Այս աշխատանքը ուսումնասիրում է ԵՊՀ-ում ուսանողների շահերը պաշտպանող կառույցների գործունեությունը, փորձելով բացահայտել առկա խնդիրներն ու մարտահրավերները, հասկանալ դրանց առաջացման պատճառները և ուսումնասիրել դրանց իրավասությունների շրջանակը: Հետազոտության նպատակ է հանդիսանում նաև, օրենսդրական ու կանոնադրական առաջարկությունների ձևակերպումը՝ ուսանողների և դասախոսների շահերը պաշտպանող կառույցների աշխատանքը բարելավելու համար:

Այս հետազոտությունը դիտարկում է ԵՊՀ վերաբերյալ հետևյալ բաղադրիչները՝

- փաստաթղթերով ամրագրված և փաստացի իրավիճակը,

---

<sup>1</sup> Ով 2012- 2018թթ. եղել է ԵՊՀ ուսանող (2013-2015թթ. ծառայել է ՀՀ զինված ուժերում)

- ուսանողների ինքնակառավարումը,
- ԵՊՀ-ի քաղաքականացվածության խնդիրը:

## Մեթոդաբանություն

Այս աշխատանքի շրջանակներում իրականացվել է ԵՊՀ ուսանողական խորհրդի, ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոնի, ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտորի հաստիքի, մշակույթի կենտրոնի, ԵՊՀ արհեստակցական կազմակերպության կանոնադրությունների, գործառույթների, խնդիրների և նպատակների համապարփակ ուսումնասիրություն: Այս հետազոտությունը փորձ է կատարում հասկանալ, թե ի պաշտոնե, ինչպիսի՞ խնդիրներ են դրված վերը նշված հաստիքները զբաղեցնող ԵՊՀ պաշտոնյաների առջև, որո՞նք եք նրանց՝ առաքելությունը, պարտավորությունների և լիազորությունների շրջանակը:

### Փաստաթղթային վերլուծություն

Հետազոտության նպատակով դիտարկվել են հետևյալ փաստաթղթերը՝ ՀՀ պետական բարձրագույն ուսումնական հաստատության խորհրդի ձևավորման կարգը հաստատելու մասին կառավարության որոշումը, Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին ՀՀ Օրենքը, ԵՊՀ ՈԻԽ կանոնադրությունը, ԵՊՀ ուսանողական խորհրդի (ՈւԽ) և ԵՊՀ արհեստակցական կազմակերպության 2015-2016թթ. ընդհանուր գործունեության և ֆինանսական հաշվետվությունները: Ուսումնասիրվել է նաև ԵՊՀ կանոնադրությունը և ԵՊՀ այն ենթակառուցվածքների կանոնադրությունները, որոնք անմիջականորեն կապ ունեն ԵՊՀ ուսանողների ինքնակառավարման, ուսանողական կառույցների համակարգման հետ, այնպես ինչպես ԵՊՀ ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոնը, ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտորի հաստիքը, մշակույթի կենտրոնը, շրջանավարտների և կարիերայի կենտրոնը:

### Գրավոր հարցումներ

Այն փաստաթղթերը, որոնք հրապարակված չեն եղել (օրինակ՝ վերը նշված կառույցների հաստիքացուցակները, ընդհանուր գործունեության և ֆինանսական տարեկան հաշվետվությունները, Հայաստանի երիտասարդական հիմնադրամից ԵՊՀ-ին փոխանցված գումարները, և այլն) ձեռք են բերվել ըստ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի սահմանած կարգի:

### Հարցազրույցներ և ֆոկուս-խմբային քննարկումներ

Անցկացվել են 27 հարցազրույցներ ԵՊՀ ուսանողների, նախկին ուսանողների և դասախոսների հետ: Հարցազրույցները ձայնագրվել են մասնակիցների թույլտվությամբ, այնուհետև սղագրվել են տվյալների վերլուծության նպատակով:

Տվյալների որակական վերլուծությունն իրականացվել է՝ տեքստից թեմատիկ կատեգորիաներ դուրս բերելով: Արդյունքների քննարկումը ներկայացված է ըստ այդ թեմատիկ կատեգորիաների: Ֆոկուս-խմբային քննարկումները անցկացվել են երկու վարող-մասնակիցների օգնությամբ, որոնցից մեկը հետևել է քննարկման պրոցեսին, իսկ մյուսը պատասխանել քննարկման արդյունքում առաջացած հարցերին: Քննարկումների մասնակիցների ընտրանքը որոշվել է համալսարանի կյանքում ուսանողների ցուցաբերած մասնակցությամբ ու ակտիվությամբ: Հաշվի առնելով համալսարանում տիրող այրակենտրոն մշակույթը և վարչակազմի կողմից ակտիվության ճնշման կամ խոչընդոտման մեխանիզմները՝ ուղղված արական սեռի ներկայացուցիչներին, օրինակ՝ ներքին խոսակցությունները, անձնական հաշվեհարդարները և այլն, քննարկումների մասնակիցներ են ընտրվել արական սեռի ներկայացուցիչներ: Ուսումնասիրության ամբողջական տվյալների վերլուծությունը ներկայացված է ըստ ուսումնասիրության նպատակային կատեգորիաների հաջորդ՝ ուսումնասիրության արդյունքների քննարկման բաժնում:

## Ուսումնասիրության արդյունքների քննարկում

### ▪ ԵՊՀ Ուսանողական խորհուրդ

#### 1.1 Իրավական և կանոնադրական խնդիրներ

Ուսումնասիրելով ԵՊՀ Ուես կանոնադրությունը, բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին ՀՀ օրենքը, ԵՊՀ հիմնադրամի կանոնադրությունը, հիմնվելով իրականացված հարցումների պատասխանների վրա՝ պարզ է դառնում, որ ԵՊՀ Ուես կանոնադրության և գործունեության մեջ առկա են խախտումներ, որոնք ուշադրության չեն արժանացել ո՛չ ԵՊՀ ղեկավարության, ո՛չ ԿԳՆ նախկին ներկայացուցիչների կողմից:

Ըստ ԵՊՀ Ուես կանոնադրության՝ ԵՊՀ Ուես-ի բարձրագույն կառավարող մարմինը Ուես համագումարն է, որը ըստ նույն կանոնադրության՝ գումարվում է առնվազն երեք տարին մեկ անգամ: Կանոնադրության 4-րդ կետի 4.7 ենթակետը ներկայացնում է համագումարի գործառույթները, որոնք ներկայացված են ստորև.

ԵՊՀ Ուես Համագումարը՝

- ընդունում է Ուես կանոնադրությունը, փոփոխություններ և լրացումներ կատարում նրանում,
- լսում և հաստատում է Ուես նախագահության տարեկան հաշվետվությունը,
- քննարկում և սահմանում է Ուես տարեկան գործունեության կարևորագույն ուղղությունները և առաջիկա տարվա ծրագրային առաջնայնությունները,
- որոշում է կայացնում Ուես վերակազմավորման վերաբերյալ:
- հաստատում է նախագահության կազմը,
- ընտրում է Ուես վերստուգիչ հանձնաժողովի անդամներին:

Ուսումնասիրելով ԵՊՀ Ուես կանոնադրության 3-րդ և 4-րդ բաժինները՝ պարզ է դառնում, որ կանոնադրության մեջ առկա են մեկ բացահայտ և մի քանի թաքնված հակասություններ: Ըստ Կանոնադրության 4-րդ կետի 4.6 ենթակետի՝ ԵՊՀ Ուես համագումարը գումարվում է առնվազն երեք տարին մեկ անգամ: Ըստ նույն կետի 4.2 ենթակետի համագումարի պատվիրակների ուղղակի ընտրությունը տեղի է ունենում երկու տարին մեկ անգամ: Ըստ ԵՊՀ Ուես կանոնադրության 3-րդ բաժնի 3.4-ի գ կետի՝ ԵՊՀ Ուես պատվիրակների ընտրություններից հետո հրավիրվում և կազմակերպվում է ԵՊՀ Ուես նոր գումարման անդամիկ համագումարը: Այսինքն, Ուես համագումար առնվազն պետք է գումարվի ոչ թե երեք տարին մեկ անգամ այլ նվազագույնը՝ երկու: Բացի դրանից, կանոնադրության 4-րդ բաժնի 4.6 կետում նշված է, որ համագումարը հաստատում է նախագահության տարեկան հաշվետվությունը, քննարկում և սահմանում է Ուես տարեկան գործունեության կարևորագույն ուղղությունները և առաջիկա տարվա ծրագրային առաջնայնությունները: Այսինքն, Ուես Համագումարը ամեն տարի ունի կատարելու կոնկրետ գործառույթներ և հետևաբար անհասկանալի է դառնում, թե ինչու համագումարը պետք է տեղի ունենա առնվազն երեք տարին մեկ անգամ:

## **1.2 ԵՊՀ Ուես իրավական խախտումներ**

ԵՊՀ Ուես վերջին Համագումարը տեղի է ունեցել 2014թ. դեկտեմբերին: Հետևաբար, ԵՊՀ Ուես կանոնադրության պահանջը չի իրագործվել, այսինքն՝ լրացել է ոչ միայն նշված 3 տարվա ժամկետը, ավելին անցել է ևս 8 ամիս, բայց Ուես բարձրագույն կառավարող մարմնի՝ համագումարի նիստը տեղի չի ունեցել: Սա նշանակում է, որ ԵՊՀ Ուես-ն տարիներ շարունակ չի ապահովել թափանցիկությունը և հաշվետվողականությունը և Ուես չհաստատված և անվավեր կանոնադրությամբ, առանց հաշվետվություններ ներկայացնելու շարունակել է իր գործունեությունը: Գործող ԵՊՀ Ուես նախագահությունը հաստատված չէ համագումարի կողմից, որը ընտրել է ներկայիս Ուես նախագահին /18.01.2018թ. ընտրման ամսաթիվ/: Նախագահության լիազորությունները ներկայացված են ստորև:

Արձանագրելով նշված խախտումները՝ հարցում է կատարվել ԵՊՀ Հասարակայնության հետ կապերի և լրատվության բաժին՝ խնդրելով տրամադրել ԵՊՀ Ուես պատվիրակների ընդհանուր քանակը և վերջին համագումարի նիստի ամսաթիվը և արձանագրությունները: Այնուհետև ԵՊՀ ներկայացուցչի կողմից ստացվել է նամակ, որտեղ նշված է՝ հարցումը բազմաձևվալ է և պահանջվում է ևս 25 օր հարցմանը պատասխանելու համար (25 օր անց ստացված նամակում նշված էր, որ հարկավոր է դիմել ԵՊՀ ուսանողական խորհուրդ):

Մինչ համագումարի մասին տեղեկատվություն ստանալու նպատակով ուղարկված հարցումը, կատարվել են բազմաթիվ գրավոր հարցումներ՝ ԵՊՀ լրատվության բաժին: Մասնավորապես հարցումներ են կատարվել ԵՊՀ Ուես-ի ֆինանսական հաշվետվության և գործունեության վերաբերյալ, որոնց համար միշտապես ստացվել են պատասխաններ, հետևաբար, հարց է առաջանում, թե ինչու պատասխան չի

ստացվել համագումարի վերաբերյալ: ԵՊՀ հասարակայնության հետ կապերի և լրատվության բաժնին անհրաժեշտ է եղել 30 օր՝ հասկանալու համար, որ իրենք իրավասու չեն պատասխանել ՈԻԽ վերաբերող հարցումներին: Ըստ ԵՊՀ ՈԼԽ-ի կանոնադրության՝ որպես ՈԻԽ աշխատանքների վերահսկման և թափանցիկության ապահովման երաշխավորներից է հանդիսանում ԵՊՀ ՈԼԽ վերստուգիչ հանձնաժողովը: Հանձնաժողովը ընտրվում է ՈԼԽ համագումարի կողմից և հաշվետու է միայն վերջինիս: Ուսումնասիրության ընթացքում հարցում է իրականացվել պարզելու՝ ովքեր են հանդիսանում ԵՊՀ ՈԻԽ Վերստուգիչ հանձնաժողովի անդամները, արդյունքում ստացվել են տվյալներ երեք անձերի վերաբերյալ: Անդամներից մեկը հարցազրույցի ժամանակ հաստատեց, որ վերստուգիչ հանձնաժողովի անդամ դարձել է 2014թ. տեղի ունեցած համագումարի ժամանակ: Այսինքն, ներկայիս կազմի լիազորությունները արդեն մոտ ութ ամիս է, ինչ դադարեցվել են: Ավելին, հարցազրույցի մասնակիցը նշեց, որ այս տարի (2018թ.) ավարտել է ասպիրանտուրայում իր ուսումնառությունը: Այսպիսով, վերջին Վերստուգիչ հանձնաժողովի կազմը հաստատվել է 2014թ. դեկտեմբերին, և եթե տեղի ունեցած լիներ համագումարի նիստ, ապա Յուրի Աշրաֆյանը գրավոր կերպով չէր պատասխանի, որ ընտրվել է 2014 թվականի համագումարի կողմից:

Հաջորդ իրավական խախտումը վերաբերում է ԵՊՀ ՈԻԽ կանոնադրության հաստատված չլինելուն: Համաձայն «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի՝ բարձրագույն ուսումնական հաստատության ՈԼԽ կանոնադրությունը հաստատվում է կրթության պետական կառավարման լիազոր մարմնի կողմից (այսինքն՝ ԿԳՆ-ի): Ի պատասխան ուսումնասիրության շրջանակներում ԿԳՆ-ին իրականացված հարցմանը պարզ դարձավ, որ ԵՊՀ ՈԼԽ կանոնադրությունը 2015 թվականից ի վեր հաստատված չէ ԿԳՆ կողմից և այս փաստը անտեսված է եղել և՛ ԿԳՆ նախկին անձնակազմի, և՛ ԵՊՀ ներկայիս վարչակազմի, և՛ ԵՊՀ ՈԼԽ-ի կողմից: Հատկանշական է, որ նախկին կառավարությունը հաստատել է ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի կազմը, որտեղ ներառված են ուսանողական ներկայացուցիչները, և ստեղծվել է մի իրավիճակ, որտեղ ՈԻԽ չունի գործող կանոնակարգ և կանոնադրություն, չի կատարել ՀՀ օրենքի պահանջը, բայց նրա կողմից պատվիրակված ուսանողական ներկայացուցիչների կազմը հաստատված է ՀՀ նախկին կառավարության կողմից:

### **1.3 ՈԻԽ գործունեության, իրավական, բովանդակային և ֆինանսական վերլուծություն**

Հասկանալու համար, թե որքանով է ՈԼԽ գործունեությունը համապատասխանել ՈԼԽ կանոնադրությունում նշված նպատակների հետ, անհրաժեշտ է ուսումնասիրել, թե ինչ բովանդակության միջոցառումներ է իրականացրել ՈԼԽ-ը և ինչպես է ծախսել համալսարանի հոգաբարձուների խորհրդի կողմից տրամադրված ֆինանսական միջոցները: Հարկ է նշել, որ ստորև իրականացված վերլուծությունը ամբողջովին իրականացվել է ՈԼԽ-ի կողմից տրամադրված 2015, 2016, 2017 թվականների



գործունեության հաշվետվությունների հիման վրա (որոնք տեղադրված են Հավելված 3-ում):

Ուես-ը չի պատասխանել այս հետազոտության շրջանակում ուղղված հարցմանը, և չի տրամադրել նույն ժամանակահատվածում իրականացրած գործունեության բովանդակային հաշվետվությունը: Վերլուծելով Ուես-ի գուտ ֆինանսական հաշվետվությունը՝ հանգում ենք այս մարմնի հիմնական զբաղվածության վերաբերյալ մեկ եզրակացության: Հասկանալու համար, թե 2015 թվականին Ուես-ի կողմից իրականացված գործունեությունը որքանով է բավարարում և համապատասխանում ԵՊՀ Ուես կանոնադրությունում առկա նպատակներին և խնդիրներին, անհրաժեշտ է պարզել, թե որքանով է այս միջոցառումների անցկացման արդյունքում Ուես-ն նպաստել ուսանողների կրթական, գիտական, ստեղծագործական, ֆիզիկական, բարոյական և հոգևոր զարգացմանը, կամ որքանով է այն պաշտպանել ուսանողների շահերը ու ապահովել նրանց մասնակցայնությունը համալսարանի կառավարման գործընթացներում: Ֆինանսական հաշվետվությունը ցույց է տալիս, որ Ուես-ն բացի ինտելեկտուալ խաղից և «Ուսանողական ինքնակառավարման հիմնախնդիրները ԵՊՀ-ում դասընթաց»-ից որևէ ֆորմալ կամ ոչ ֆորմալ կրթական ծրագիր 2015 թվականին չի իրականացվել, մինչդեռ նույն 2015 թվականի ընթացքում Ուես-ին տրամադրվել է մոտ 9.027.800 ՀՀ դրամ:

2015 թվականին ԵՊՀ Ուես կողմից կազմակերպվել է թվով 58 միջոցառում, որոնցից 16-ը «Էլիտբաս»-ի կողմից իրականացրած ուսանողների ուղևորություններն ու փոխադրումներն են ՀՀ տարբեր քաղաքներ, գյուղեր և Արցախ, որոնց վրա ընդհանուր առմամբ ծախսվել է 3.575.000. ՀՀ դրամ (գումարը կազմում է 2015 թվականի ընդհանուր բյուջեի 39%-ը): Այցի նպատակի, տևողության և մասնակիցների մասին որևէ տեղեկատվություն չի տրամադրվել: Բացառությամբ այցի նպատակով ծախսված գումարի՝ որևէ այլ տեղեկատվություն բացակայում է: Միջոցառումների անվանումներից (տե՛ս Հավելված 2, տողեր 5-9) կարելի է ենթադրել, որ այցերից մեկի ժամանակ ուսանողները մասնակցել են ինտելեկտուալ խաղի, Վարդանանց տոնին նվիրված միջոցառման և մեկ անգամ էլ Եվրոպական երիտասարդական պառլամենտի 2-րդ երևանյան միջազգային ֆորումին: Պետք է նշել, որ այս բոլոր գործողությունները նշված են որպես միջոցառումներ: 2015 թվականին ԵՊՀ Ուես-ը ինտելեկտուալ խաղի մասնակցություն է ունեցել Արցախում, և խաղի արդյունքում ուսանողներին տրված նախաճաշը, ճաշը և գիշերավարձը հաշվել են որպես երեք առանձին միջոցառումներ (տե՛ս Հավելված 2, էջ.38): Մեկ անձին տրվող նախաճաշի համար ծախսվել է՝ 2.492 ՀՀ դրամ, իսկ ահա ճաշի նպատակով՝ 4.492 ՀՀ դրամ: Մեկ անձի գիշերավարձի համար տրամադրվել է 9.500 ՀՀ դրամ: Եթե այս բաժիններին գումարովի նաև փոխադրման ծախսը ապա այն կազմում է 999.000 ՀՀ դրամ: Եթե հանենք այս ընդհանուր թվից 42 անձի փոխադրման 160.000 ՀՀ դրամը, ապա պարզ է դառնում, թե մեկ անձի համար ընդհանուր առմամբ որքան գումար է ծախսվել՝ 9.500 ՀՀ դրամ + 2.492 ՀՀ դրամ + 4.492 ՀՀ դրամ կազմում է 16.484 ՀՀ դրամ: Անհրաժեշտ է նաև նշել, որ ընթերցի համար գումար նախատեսված չի եղել: Թե ի՞նչ է իրենից

ներկայացնում ինտելեկտուալ խաղը դա նույնպես նշված չէ: Այստեղ կարող ենք առանձնացնել, որ ինտելեկտուալ խաղին մասնակցելու նպատակով Արցախ կատարված մեկ այցը նախ ներկայացվում է, որպես չորս միջոցառում և այցի վերաբերյալ բացակայում է որևէ նկարագրողական տեղակտվություն, հետո առկա է միայն՝ ֆինանսական հաշվետվությունը, այն էլ ոչ ամբողջական: 2015 թվականին ՈւԽ-ը նաև ձեռք է բերել գրենական պիտույքներ (183.899 ՀՀ դրամ) և քարթրիջների լիցքավորման ծախս (56.300 ՀՀ դրամ): Այս բոլոր գործողությունները միասին կազմել են 16 միջոցառում: Զանի որ, ինչպես այցերի դեպքում, այս դեպքում էլ տրամադրված են միայն թվեր, հնարավոր չէ հասկանալ, թե ինչ նպատակով են ձեռք բերվել այս միջոցները, ինչ նպատակով են ծախսվել և ովքեր են եղել շահառուները: 2015 թվականին ՈւԽ երկու անդամներ գործուղվել են Եկատերինբուրգ և ՈւԽ-ի կողմից նրանց տրամադրվել է թվով՝ 476.000 ՀՀ դրամ: Ինչպես են ընտրվել այդ երկու անդամները և ինչ նպատակով են նրանք գնացել Եկատերինբուրգ նշված չէ: Ընդհանուր 56 միջոցառումների մեջ որպես առանձին միջոցառումներ նշված են 11 գործողությունները, որոնք վերաբերում են տարբեր ապրանքների՝ զգեստի կտոր, ցուցանակ, քաղցրավենիք (և այլն) ձեռք բերմանը: Այս պարագայում նույնպես նշված չէ, թե ինչ նպատակով են գնվել այդ բոլոր ապրանքները: 2015 թվականի ընթացքում ՈւԽ-ի կողմից իրականացվել են նաև հետևյալ վեց միջոցառումները, ընդհանուր ծախսը՝ 3.614.800 ՀՀ դրամ.

- *Ուսանողների ձմեռային հանգիստ 450 հոգի, մեկ օր,*
- *Մարտ 5-7 ԵՊՀ ՈւԽ կազմակերպված միջոցառման կեցություն և սնունդ, 56 մարդ,*
- *Սուրճի ընդմիջում,*
- *Ցեղասպանության 100-ամյակին նվիրված միջոցառման համար կատարված աշխատանքների համար խրախուսում,*
- *Ուսանողական ինքնակառավարման հիմնախնդիրները ԵՊՀ-ում դասընթացի մասնակիցների կեցություն և սնունդ,*
- *Ուսանողների միջազգային օրվա հյուրասիրություն:*

2016 թվականին ՈւԽ միջոցառումների հաշվետվությունում նշված է 34 միջոցառում: 2016 թվականին ՈւԽ-ն ծախսել է 4.306.350 ՀՀ դրամ, որից միայն 3.210.000 ՀՀ դրամ ծախսվել է ութ այցերի նպատակով: Ինչպես նախկին տարում, այս անգամ նույնպես, բացակայում է որևէ նկարագրություն իրականացված այցերի մասնակիցների քանակի, այցի նպատակի և ժամանակագրության մասին: 2016 թվականին 144.071 ՀՀ դրամ է ծախսվել գրենական պիտույքների և 617.976 ՀՀ դրամ տարբեր ապրանքներ ձեռքբերելու համար: 2016 թվականին միջոցառումների մեջ նաև նշված է հետևյալ միջոցառումը՝ Ուսանող-2016 մ-բ. ծառ. պայմանագիր, որի համար տրամադրվել է 447.000 ՀՀ դրամ: Պարզ չէ, թե ինչի մասին է այս միջոցառումը և ինչի համար է գումար հատկացվել: Վերջին միջոցառումում նշված է դասընթացի մասնակցության վճար, որի համար տրամադրվել է 47.700 ՀՀ դրամ, բայց այս անգամ նույնպես նշված չէ, թե ինչ դասընթաց է և ինչ նպատակով է գումարը ծախսվել: Ինչպես տեսնում ենք ԵՊՀ ՈւԽ-ի կողմից տրամադրված 2016 թվականի միջոցառումների հաշվետվությունը նույնպես

մի թերի ցուցակ է, որը չի ամփոփում լիարժեք տվյալներ ձեռնարկած գործողությունների և դրանց նպատակով ծախսված ֆինանսական միջոցների մասին: Ավելին, տրամադրված հաշվետվությունը չի ներառում գեթ մեկ գիտակրթական ծրագիր կազմակերպված Ուես-ի կողմից 2016 թվականի ընթացքում:

2017 թվականի ԵՊՀ Ուես կազմակերպել է թվով՝ 96 միջոցառում: Դիտարկելով 2017 թվականի ԵՊՀ Ուես կողմից կազմակերպված միջոցառումների ցանկը՝ կարող ենք առանձնացնել հետևյալ նախաձեռնությունները՝

- *Քննարկում՝ «Ուես. Կառույցների ազդեցությունը և դերը բարձրագույն կրթական համակարգերում»,*
- *Բանավեճի ակումբ՝ 156.000.00 ՀՀ դրամ,*
- *Ուես. Ինքնակառավարում,*
- *Դասընթաց,*
- *«Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» խաղ,*
- *«Մենք զինվոր ենք»՝ 114.000.00 ՀՀ դրամ,*
- *«Համահայկական ուսանողական բանակում»,*
- *«Երգող, պարող, ասմունքող համալսարանական»,*
- *Ուես թերթ «Ալեք Մանուկյան 1»՝ 55.000.00 ՀՀ դրամ,*
- *Ուսանողների ինքնակառավարման 4-րդ միջազգային ֆորում (student self-government 4<sup>th</sup> international forum):*

Վերը նշվածը 2017 թվականի Ուես կողմից իրականացված միակ միջոցառումներն են: Հաջորդ 86 գործողությունները հիմնականում գնումներ և այցել են: Կազմակերպված 96 միջոցառումներից՝ 17-ը կրկին այցել և ուղևորություններ են, որոնց վրա ծախսվել է 2.490.000 ՀՀ դրամ: Նույն թվականին ձեռք է բերվել 1.506.764 ՀՀ դրամի գրեթե ակամպիտոյքներ: Երկու պարագայում էլ նորից բացակայում են տվյալներ մասնակիցների քանակի և ծախսերի նպատակաուղղվածության մասին: 2017 թվականին հետևյալ միջոցառումների սննդային ապահովության կազմակերպման համար ծախսվել է 1.832.160 ՀՀ դրամ:

- (1) Սնունդ՝ Իջևանի մասնաճյուղի, միջոցառման սնունդ,
- (2) Սնունդ՝ Իջևանի մասնաճյուղի, միջոցառման սնունդ,
- (3) Սնունդ՝ «Ուես. Կառույցների ազդեցությունը և դերը բարձրագույն կրթական համակարգերում»,
- (4) Հյուրասիրություն՝ Ուես. ինքնակառավարում 17 ծր կեցություն+սնունդ,
- (5) Սնունդ, Ուսանողները հանուն բնության,
- (6) Սնունդ, ԵՊՀ-ն երեխաների համար,
- (7) Սնունդ, Գիտակրթական հանձնաժողով,
- (8) Սնունդ, ԵՊՀ-ն երեխաների համար,
- (9) Սնունդ, Ամանորյա ուսանողական միջոցառման կազմակերպում:

Վերոնշյալ ծրագրերի իրականացման վերաբերյալ չկա որևէ բնութագիր:

Ի տարբերություն 2015 և 2016 թվականների հաշվետվություններին՝ այս անգամ ավելացել է նաև ապրանքանյութական բաժինը, որի համար հատկացվել է 1.025.958

ՀՀ դրամ: Թվով յոթ գործողություններ նշված են *Այլ ծառայություններ* հատվածում, որոնց համար ընդհանուր առմամբ հատկացվել է 1.011.903 ՀՀ դրամ:

- 1.Այլ ծառայություններ, Ուսանող 2017 միջ. հուշադրողների պատր,
- 2.Այլ ծառայություններ, Պայմանագիր 5416,
- 3.Այլ ծառայություններ, Պայմանագիր 5418,
- 4.Այլ ծառայություններ, Պայմանագիր 5419,
- 5.Այլ ծառայություններ, Սուրհանդակային ծառայություն, 4 ուսանողի գործուղում Սերբիա,
- 6.Այլ ծառայություններ, Սուրհանդակային ծառայություն, 4 ուսանողի գործուղում Սերբիա:

Հարկ է նշել, սույն վերլուծությունը իրականացվել է Ուես կողմից տրամադրված 2015-2017թ. իրականացրած գործունեության ծրագրերի և միջոցառումների կատարողականների հիման վրա, չնայած որ տրամադրված փաստաթղթերը ավելի շատ նման են ուղղակի ֆինանսական կատարողականների: Բոլոր այս փաստաթղթերը տրամադրվել են 30 օրվա ընթացքում և հասանելի չեն ԵՊՀ կայքում: Տվյալ փաստաթղթերի բացակայությունը խոսում է Ուես գործունեության թափանցիկության և հաշվետվողականության աստիճանի մասին: Տրամադրված փաստաթղթերի բովանդակությունը ցույց է տալիս, որ իրականացրած միջոցառումների մեծամասնությունը ավելի շատ վերաբերում են ժամանցային ու տեխնիկական խնդիրներ լուծելուն: Մեկ այլ հարց է, թե նույնիսկ այդ ժամանցի և հանգստի միջոցառումները, որքանով են եղել ներառական և ուսանողներից, ովքեր են մասնակցել այդ միջոցառումներին, արդյոք համալսարանի բոլոր ուսանողները հնարավորություն են ունեցել օգտվել այդ հնարավորություններից, թե ուսանողների միայն մեկ խումբ: Զանի որ միջոցառումներից և ոչ մեկում առկա չէ գեթ մեկ նկարագիր՝ մասնակիցների թիվ և անուններ, հետևաբար բարդ է հասկանալ, թե ովքեր մասնակցել են, ովքեր՝ ոչ, ինչ հիմունքներով է կատարվել մասնակիցների ընտրությունը:

- **Ուես քաղաքականացվածությունը, Հայաստանի Հանրապետական կուսակցության ազդեցությունը ԵՊՀ ուսանողների ինքնակառավարման վրա**

### **2.1.Ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոն**

Հայաստանյան պետական բուհերում գործող ուսանողական խորհուրդների կուսակցականացված լինելու վերաբերյալ տարածված և բազում քննարկումների առարկա դարձած կարծիքը գոյություն ունի դեռ 2000-ականներից: Լինում են դեպքեր, երբ ուսանողական խորհուրդների նախագահները կամ Ուես-ում պաշտոններ զբաղեցնող անձիք անդամատոմսով կուսակցականներ չեն լինում, ինչը հնարավորություն է նրանց տալիս ուղղակի մերժելու կուսակցության հետ որևէ կապ, իսկ Ուես անդամները, բուհի վարչակազմի ներկայացուցիչները և ուսանողական

խորհուրդներին սատարող անձինք հիմք են ստանում խոսելու և արդարանալու՝ ինչպես ԵՊՀ ՈւԽ-ի դեպքում: ԵՊՀ ՈւԽ-ի ներկայիս նախագահը, ինչպես նաև ԵՊՀ ՈւԽ-ում այլ պաշտոններ զբաղեցնող անձինք չունեն կուսակցական անդամատոմս և չեն հանդիսանում Հայաստանի Հանրապետական կուսակցության (ՀՀԿ) անդամներ: Բայց ԵՊՀ ՈւԽ-ի գործունեությունը ցույց է տալիս, որ այն՝ ինչպես համալսարանի ամբողջ վարչակազմը, միշտ փորձել է ցույց տալ նախկին իշխանություններին և ՀՀԿ-ին իր հավատարմությունը: Շատ ուսանողներ և ՈւԽ անդամներ չեն էլ նկատել, որ ԵՊՀ ՈւԽ-ը կուսակցականացված ուսանողական կազմակերպություն է:

ԵՊՀ ՈւԽ անմիջական կապ ունի ԵՊՀ-ում գործող ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոնի հետ: Այս կառույցի հաշվետվություններում ներկայացված են ՈւԽ-ի կողմից իրականացրած միջոցառումները, և այս կառույցում են աշխատել տարբեր ժամանակներում ՈւԽ-ում տարբեր պաշտոններ զբաղեցնող ուսանողներ: Այս կառույցի տնօրենը հանդիսանում է ՀՀԿ անդամ և 2015թ-ից ի վեր ՈւԽ-ի ընտրական հանձնաժողովի նախագահ, այն է՝ վերահսկում է ԵՊՀ ՈւԽ-ի ընտրությունները: Առավել ցուցադրական միտումով՝ թե ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոնի իրական նպատակը եղել է ուսանողական կառույցները՝ մասնավորապես ՈւԽ-ը վերահսկելը, այս մասում կներկայացվի ԵՊՀ ուսանողների հետ տարվող աշխատանքների գծով կենտրոնի դերը, իրականացրած գործառույթները, այնտեղ աշխատող կամ նախկինում աշխատած անձանց քաղաքական կենսագրությունները, սույն կառույցի գործունեության բովանդակային և ֆինանսական հաշվետվությունները:

### **Ուսանողների հետ տարվող աշխատանքների բաժինը**

Այս բաժինը ստեղծվել է 1996 թվականին ԵՊՀ գիտական խորհրդի որոշմամբ: Ստեղծման պահից մինչև 2006 թվականը այն գտնվել է ԵՊՀ ուսումնական վարչության կազմում, իսկ այժմ հանդես է գալիս որպես առանձին սուբյեկտ: Ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոնի գործառույթներն են՝

- *ԵՊՀ-ում գործող ուսանողական կազմակերպությունների աշխատանքների համակարգումը,*
- *ուսանողական լայն զարգացման տեղեկատվությամբ ապահովելը,*
- *ուսուցման արդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրերի մշակումն ու իրականացումը,*
- *ուսանողների ազատ ժամանցն ու հանգիստը կազմակերպելը,*
- *ուսանողների սոցիալական վիճակը բարելավելը,*
- *ԵՊՀ տարածքում ուսանողների ներքին կարգապահության պահպանումն ապահովելը:*

Առաջին բաժնում նշված է, որ ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոնը համակարգում է ուսանողական կազմակերպությունների աշխատանքները: Բայց երբ ուսումնասիրում ենք ԵՊՀ ՈւԽ կանոնադրությունը տեսնում ենք, որ վերջինս ԵՊՀ ուսանողների ինքնակառավարումը կազմակերպող կառույց է, որն ունի ինքնավարություն, հետևաբար, հարց է առաջանում, թե ինչպե՞ս ռեկտորատին կից

կառույցը կարող է համակարգել վերջինիս գործունեությունը: Իհարկե, այստեղ պետք է նաև հասկանալ, թե ինչ է նշանակում «համակարգել» բառը կամ երևույթը, բայց քանի որ գործառույթների մասում այն պարզաբանված չէ, կփորձենք դա վերլուծել՝ հիմնվելով վերջինիս աշխատանքների բնույթի և տարվող կադրային քաղաքականության արդյունքների վրա: Բացի վերոնշյալից, այս գործառույթը նշված է ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտորի խնդիրներ բաժնում:

ԵՊՀ ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտորի հիմնական խնդիրներն են ուսանողների հետ տարվող աշխատանքների համակարգումը, ուսանողների հասարակական և քաղաքացիական ակտիվության խրախուսմանն ու սոցիալական խնդիրների լուծմանն ուղղված համալիր ծրագրերի իրականացումը, ԵՊՀ բոլոր տարիների շրջանավարտների հետ կապերի ակտիվացումը, մայր բուհ-շրջանավարտ համագործակցության զարգացումը, ԵՊՀ շրջանավարտների միասնական հենքի ստեղծման ծրագրի համակարգումը և շրջանավարտ-գործատու հարաբերությունների ստեղծումը:

Երկրորդ գործառույթը՝ ուսանողական լայն զանգվածներին տեղեկատվությամբ ապահովելը, նույնպես խնդրահարույց է: ԵՊՀ-ում ռեկտորատին կից աշխատում է ԵՊՀ հասարակայնության և լրատվության վարչությունը, որի նկարագրության մեջ նշված է՝ «ԵՊՀ հասարակայնության հետ կապերի և լրատվության վարչության աշխատանքներն ընթանում են ներքին և արտաքին հաղորդակցության, ԵՊՀ-ին վերաբերող հրապարակումների վերլուծության, ԵՊՀ-ի վարկանիշի բարձրացման, համալսարանական տպագիր և էլեկտրոնային միջոցների, համալսարանին առնչվող տեսանյութերի մշակման ու մի շարք այլ ուղղություններով»: Ինչպես տեսնում ենք սույն վարչության գործառույթների մեջ է մտնում նաև ներքին հաղորդակցության ապահովումը և հետևաբար տեղեկատվության փոխանցումը համալսարանականներին, այդ թվում՝ նաև ուսանողներին: Իր հերթին ՈւԼԽ-ի կանոնադրության «Նպատակներ և խնդիրներ» բաժնում նշված է՝

*«Իրազեկել ուսանողներին իրենց իրավունքների և պարտականությունների մասին, նպաստել ուսանողների իրավագիտակցության մակարդակի բարձրացմանն ու ակտիվ քաղաքացիական կեցվածքի ձևավորմանը»:*

Այս կետից կարելի է ենթադրել, որ ՈւԼԽ-ն նաև իրականացնում է ուսանողներին իրազեկող գործառույթ: Իսկ եթե նույնիսկ ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոնի գործառույթներում նշված ուսանողական լայն զանգվածներին տեղեկատվությամբ ապահովելը ավելի լայն գործառույթ է, քան հասարակայնության և լրատվության վարչության և ՈւԼԽ-ի կողմից այս հատվածում արված քայլերը, ապա ուղղակի պետք է դրանք վերանայել, շտկել ու հանձնել այն կառույցներին, ովքեր կոչված են այն իրականացնելուն, քանի որ այս երկու կառույցներին է պատկանում տեղեկատվական հատվածի ու ուսանողներին այդ տեղեկատվությունը փոխանցելու գործառույթը:

ԵՊՀ ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոնի հաջորդ գործառույթը՝ ուսուցման արդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրերի մշակումն ու իրականացումն է: Սույն գործառույթը որոշակի փոփոխված տարբերակով հանդիպում է նաև Ռեկտորատին կից հետևյալ կառույցների գործառույթներում:

*Օրինակ՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր.  
ԵՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի հիմնական խնդիրներն են՝ ԵՊՀ ուսումնական գործընթացում մասնակցող կառուցվածքային ստորաբաժանումների աշխատանքների և կրթության որակի գնահատման, ապահովման և վերահսկման կազմակերպումը, կրթական բարեփոխումների և որակավորման բարձրացման, մասնագիտական վերապատրաստման և լրացուցիչ կրթության կազմակերպման իրականացումը:*

Որակի ապահովման կենտրոն.

Որակի ապահովման կենտրոնը Երևանի պետական համալսարանի ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանում է, որի առաքելությունը համալսարանում որակի ներքին ապահովման մեխանիզմների գործադրումը և որակի շարունակական բարելավման մշակույթի խթանումն է: ԵՊՀ որակի ապահովման հայեցակարգի հիմքում համալսարանի որակի ապահովման համակարգի առաքելությունն է նպաստել համալսարանի գործունեության հիմնական ոլորտներում (կրթություն, գիտություն և հանրային ծառայություններ) վստահության ամրապնդմանը և հավաստել, որ համալսարանի շնորհած որակավորումների որակն ու գործող չափորոշիչները պահպանվում, շարունակաբար բարելավվում և արդյունավետ կառավարվում են: Սույն գործառույթը նաև նշված է ՌԻԽ-ի կանոնադրության «Նպատակներ և գործունեության հիմնական ուղղություններ» բաժնի Դ. կետում (*«Մասնակցել ուսումնական գործընթացի կազմակերպմանը և ուսուցման արդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրերի մշակմանն ու իրականացմանը»*):

Ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոնի հաջորդ գործառույթը՝ ուսանողների սոցիալական վիճակի բարելավումն է: Այս գործառույթը նշված է ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտորի խնդիրների բաժնում: Ուսանողների սոցիալական վիճակի բարելավման գործառույթը նշված է նաև ՌԻԽ-ի կանոնադրության «Նպատակներ և գործունեության հիմնական ուղղություններ» բաժնի 7-րդ կետերում:

Հաջորդ երկու գործառույթները հետևյալն են՝ ուսանողների սոցիալական վիճակի բարելավումը, ԵՊՀ տարածքում ուսանողների ներքին կարգապահության պահպանումն ապահովելը: Վերջիններս լիովին համապատասխանում են ՌԻԽ-ի կանոնադրության «Նպատակներ և գործունեության հիմնական ուղղություններ» բաժնի 7-րդ և 8-րդ կետերին:

Ուսումնասիրելով ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոնի գործառույթները, համեմատելով դրանք համալսարանում առկա այլ մարմինների խնդիրների և գործառույթների հետ՝ տեսնում ենք, որ դրանք ուղղակի վերցված են այլ մարմիններից: Եվ եթե մի կենտրոնի նպատակը միայն այդ գործառույթների իրականացումն է, որոնք ըստ համալսարանի կանոնադրության՝ պետք է իրականացնեն նաև այլ մարմիններ, հետևաբար, հարց է առաջանում, թե որքանով է տեղին տվյալ կենտրոնի գոյությունը:

Պատկերը ամբողջացնելու համար ուսումնասիրության է ենթարկվել նաև ԵՊՀ ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոնի կատարած աշխատանքը: ԵՊՀ ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոնի կողմից իրականացված ծրագրերի համապատասխանեցումը նրա գործառույթների հետ պարզելու նպատակով՝ համալսարանին հարցումներ են կատարվել կենտրոնի՝ 2015, 2016 և 2017 թվականներին ընդհանուր գործունեության և ֆինանսական հաշվետվություններ ստանալու համար, սակայն տրամադրվել է միայն ստորաբաժանման ծախսերի կատարողականը: Կարելի է ենթադրել, որ եթե օրենքով սահմանված կարգով ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոնը չի տրամադրում գործունեության բովանդակային հաշվետվություն, ապա այն ուղղակի, որևէ նշանակալի գործունեություն չի իրականացնում: Ամեն դեպքում, որոշակի պատկեր կարող ենք ստանալ նաև՝ երկու տարիների ֆինանսական կատարողականը ուսումնասիրելով:

2015 թվականին ԵՊՀ ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոնի ֆինանսական կատարողականում նշված է թվով՝ 17 միջոցառում, որոնցից վեցը քարթրիջի լիցքավորում և նորոգում է, իսկ՝ ինը ուղղակի գնումներ: Նույն թվականի կատարողականում նշված է նաև, որ 26.400 ՀՀ դրամ և 6.400 ՀՀ դրամ ծախսվել են «Համակարգչի նորոգում կոշտ սկավառակ» և «Լրակազմ» գնելու նպատակներով: Ընդհանուր 2015 թվականին կենտրոնը ծախսել է 468.569.8 ՀՀ դրամ: Ընդ որում, հարցումների պատասխանները բավականին անհասկանալի են ձևակերպված, որտեղ միշտ չէ, որ հստակ տարանջատված են ծախսերի նպատակները, իսկ շատ դեպքերում նույն տեսակի գնումները ներկայացված են տարբեր տողերում (նմուշները տեղադրված են Հավելված 3-ում): Ինչպես երևում է, 2015 թվականին ֆինանսական կատարողականում բացակայում է որևէ ծախս, որ պայմանավորված է ինչ-որ ծրագրի իրականացման հետ կամ առնչություն ունի կենտրոնի հինգ գործառույթների հետ:

2016 թվականին կենտրոնը իրականացրել է 19 միջոցառում և դրանց համար տրամադրել ընդամենը՝ 839.087.7 ՀՀ դրամ: Միջոցառումներից 18-ը տարբեր ապրանքների գնումներ են և միայն մեկ միջոցառման նկարագրի մեջ նշված է, որ հատկացվել է 220.000 ՀՀ դրամ տրանսպորտային ծախսերի համար, սակայն նշված չէ ծախսի նպատակը: Սույնը հնարավորություն է ընձեռում փաստելու, որ 2016 թվականին, ըստ կենտրոնի ծախսերի կատարողականի գումար չի հատկացվել որևէ ծրագիր անցկացնելու համար և հետևաբար կենտրոնի միջոցառումների և գործառույթների համապատասխանության մասին խոսելը անհիմն է:



Հետազոտության ընթացքում պարզ դարձավ, որ 2017 թվականին ֆինանսական կատարողականում նույնպես հիմնականում ապրանքների ձեռքբերումներ են և խոսք չկա միջոցառումների իրականացման համար ծախսված գումարների մասին, բացի երկու դեպքից: Ֆինանսական կատարողականում նշված է, որ ծախսվել է 139.920 ՀՀ դրամ ԵՊՀ մարտական պատրաստության ակումբի Արցախ կատարած այցի ժամանակ և գնվել է Լեոնիդ Ազգալոյանի անվան մեկ մարտական դրոշ, 2017թ. ընդհանուր առմամբ ծախսվել է՝ 936.742.34 ՀՀ դրամ: Այսպիսով, 2015-2017 թվականներին ԵՊՀ ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոնի կողմից ծախսվել է մոտավորապես 2.244.398 ՀՀ դրամ, բայց, թե որքանով են իրականացված ծախսերը պայմանավորված եղել կենտրոնի գործառույթների հետ պարզ է դառնում վերլուծելով երեք տարվա ֆինանսական կատարողականները:

ԵՊՀ-ում գործող ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոնի գործունեությունը ավելի արդյունավետ վերլուծելու նպատակով անհրաժեշտ է հասկանալ, թե ինչ գործընթացների մեջ է ներգրավված եղել կառույցը և ինչ կադրային քաղաքականություն է իրականացրել: Ինչպես արդեն նշվել էր, ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոնի տնօրենը 2015 թվականից հանդիսացել է ԵՊՀ ՈւԽ-ի ընտրական հանձնաժողովի նախագահ: Կենտրոնի աշխատակիցները նաև ներգրավված են եղել 2015-2017 թվականներին ՈւԽ-ի ընտրություններում: Կենտրոնի տնօրենը պաշտոնավարում է սկսած 2012 թվականից: 2006-2011 թվականներին նա հանդիսացել է ԵՊՀ ուսանողների հետ տարվող աշխատանքների բաժնի տեսուչ, իսկ 2012 թվականից նույն բաժնի վարիչ: Ներկայումս նա հանդիսանում է ՀՀԿ խորհրդի անդամ և չի թաքցնում նաև իր քաղաքական կողմնորոշումները, իսկ 2018 թվականի արտահերթ խորհրդարանական ընտրություններում ՀՀԿ-ի ցուցակով առաջադրվել է որպես ռեյտինգային թեկնածու: Մինչ այդ, 2006-2012 թվականներին ուսանողների հետ տարվող աշխատանքների բաժնի պետ է եղել ՀՀԿ մեկ այլ անդամ, ով 2004-2008 թվականներին հանդիսացել է ԵՊՀ ՈւԽ-ի նախագահ: Մինչ խորհրդարանական արտահերթ նոր ընտրությունները նա եղել է ԱԺ ՀՀԿ պատգամավոր: 2013 թվականին հրապարակած Lragir.am լրատվականի տեսանյութում<sup>2</sup> կարելի է տեսնել կենտրոնի տնօրենին, ով, կոչ անելով դասադուլ անող ուսանողներին լքել համալսարանական տարածքը և բուհը չքաղաքականացնել, ցույց է տալիս իր ՀՀԿ կրծքանշանը:

Այս կենտրոնի քաղաքականացվածությունը ուղղակիորեն արտացոլվում է վարած կադրային քաղաքականությամբ: Օրինակ՝ ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոնում 2009-2012 թվականներին որպես գլխավոր մասնագետ աշխատել է մի անձ, ով 2008-2012 թվականներին հանդիսացել է նաև ԵՊՀ ՈւԽ-ի նախագահ: 2012 թվականից նա հանդիսանում է ՀՀԿ խորհրդի անդամ: 2015 թվականից մինչ այսօր (2018թ.) ԵՊՀ ուսանողների հետ տարվող աշխատանքների բաժնում աշխատում է այն անձը, ով 2012-2017 թվականներին հանդիսացել է ՈւԽ-ի նախագահ: Այսինքն՝ նա միաժամակ եղել է թե՛ ՈւԽ-ի նախագահ, թե՛ աշխատել է

---

<sup>2</sup> Lragir.am-ի տեսանյութը բուհերում դասադուլների մասին հրապարակված 26.02.2013թ.  
<https://www.youtube.com/watch?v=ATRj-XuDMmw>

սույն կառույցում: 2017 թվականից ԵՊՀ ուսանողների հետ տարվող աշխատանքների բաժնում աշխատել է նաև մեկ այլ անձ, ով 2016 թվականի դեկտեմբերի 28-ին դարձել է ԵՊՀ ՈւԽ-ի նախագահ: Հատկանշական է, որ 1999-2003 թվականները ԵՊՀ ուսումնական վարչության և ուսանողական բաժնի պատասխանատուի պաշտոնում եղել է մեկ այլ ՀՀԿ անդամ: Կենտրոնի երկու գլխավոր մասնագետները նույնպես անմիջական կապ են ունեցել ԵՊՀ ուսանողական կառույցների հետ: ԵՊՀ ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոնի գլխավոր մասնագետը նաև հանդիսանում է ԵՊՀ ուսանողական գիտական ընկերության (ՈԲԳ) նախագահը, իսկ մեկը 2016 թվականի դեկտեմբերի 26-ին ընտրվել է ԵՊՀ ՈւԽ-ի քարտուղար: Կենտրոնի մեկ այլ աշխատակից, ծրագրերի համակարգողը 2014-2016թ. հանդիսացել է ԵՊՀ Արևալյազիտության ֆակուլտետի ՈւԽ-ի նախագահ: Ակնհայտ է՝ ռեկտորատին կից գործող կառույցի և ՈւԽ-ի կապը, որն էլ իր հերթին բացասական կերպով անդրադառնում է կառույցի ինքնավարության վրա:

Այս հատվածում անհրաժեշտ է ներկայացնել նաև Հայաստանի երիտասարդական հիմնադրամից ԵՊՀ փոխանցած գումարները: Հիշեցնենք, որ թավշյա հեղափոխությունից հետո հիմնադրամին համալսարաններից տրվող ֆինանսական միջոցների հոսքը դադարեցվեց: 2016 թվականին Հայաստանի երիտասարդական հիմնադրամից ԵՊՀ-ին փոխանցվել է՝ 136.610.200 ՀՀ դրամ, 2017 թվականին՝ 67.323.854 ՀՀ դրամ և 2018 թվականին՝ 20.502.000 ՀՀ դրամ (տե՛ս փաստաթղթերը Հավելված 4-ում): Մտահոգիչ է, որ հիմնադրամի կողմից փոխանցված գումարներով իրականացված մի քանի միջոցառումներ իրականացվել են հենց ԵՊՀ ՈւԽ-ի և ԵՊՀ ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոնի կողմից, բայց որևէ փաստաթղթում տրված չէ ֆինանսական բացվածք, ծրագրի նպատակ, օգտագործված ռեսուրսներ, այլ ուղղակի նշված է օրինակ՝

- 1. Ցեղասպանության 100-ամյակի պուրակի հիմնում Բերձորում՝ 6.438.000 ՀՀ դրամ,*
- 2. Հանդիսավոր համերգ և 1-ին կուրսեցիների երդման արարողություն՝ 1.825.000 ՀՀ դրամ,*
- 3. Համաքուհական բանակում Արցախում՝ 9.275.000 ՀՀ դրամ (այսպիսի միջոցառումները շատ են):*

Հիմնադրամից ստացած գումարներով ԵՊՀ-ն նաև կատարել է զեղչեր, օրինակ 2016 թվականին՝ մոտավորապես 26.647.000 ՀՀ դրամ, սակայն այս հետազոտության շրջանակներում հարցմանը, թե ինչ չափանիշներով են տրվել զեղչերը և ում՝ որևէ պատասխան չտրվեց:

#### ▪ **Որակական տվյալների վերլուծություն**

Որակական վերլուծությունը ցույց է տալիս, որ քաղաքացիական ակտիվություն ցուցաբերած ուսանողները հանդիպել են տարբեր խոչընդոտների, որոնք կարող են

բաժանվել ըստ տեսակների՝ *խոչընդոտներ հենց այդ քաղաքացիական ակտիվության ցուցաբերման ընթացքում, խոչընդոտներ ուսուցման վերաբերյալ և ուսուցման ընթացքում*: Խոչընդոտները բնութագրվում են որպես ճնշումներ, սպառնալիքներ և վերահսկում: Հատկանշական է, որ համալսարանի ուսանողների կամարտահայտման, ազատ տեղաշարժի և ինքնագործունեության սահմանափակման համար օգտագործվել են տարբեր մեթոդներ և գործընթացի մեջ ներգրավվել են համալսարանի տարբեր ենթակառուցվածքների ներկայացուցիչներ: Հարկ է նշել, որ ուսանողների ազատ գործունեության սահմանափակման պրակտիկան համալսարանում բավականին արմատավորված է և ճնշում իրականացողների համար սովորական երևույթ է: Կարելի է փաստել, որ շատ ուսանողներ չեն բարձրաձայնում իրենց պատմությունների մասին՝ չցանկանալով թշնամանալ համալսարանական վարչակազմի հետ: Ուսումնասիրության արդյունքում մենք նաև հանդիպել ենք մի շարք ճնշման դեպքեր, երբ ուսանողները չեն ցանկացել տալ հարցազրույց և ուղղակի պատմել են միջադեպի մասին: Հետազոտության արդյունքում որակական տվյալները բաժանվել են հնարավոր թեմատիկ կատեգորիաների, որոնք ներկայացվում են ստորև:

- *Անձնական տարածքի ներխուժում, սոցցանցերում քաղաքացիական մասնակցայնության ապախրախուսում*

Ուսանողների հետ անցկացված հարցազրույցները ցույց տվեցին, որ համալսարանական վարչակազմի մոտ տարածված պրակտիկա է հետևել ուսանողների ֆեյսբուքյան էջերին: Ուսանողներից մեկը պատմեց, որ իր ֆակուլտետի դեկանը և փոխդեկանները իրեն կանչել են դեկանատ և ասել, թե ինչու է նա հավանում «Ռեստարտ» ուսանողական-քաղաքացիական նախաձեռնության կողմից արված ֆեյսբուքյան հայտարարությունները: Այս միջադեպը տեղի է ունեցել այն ժամանակ, երբ «Ռեստարտ» նախաձեռնությունը խոսում էր համալսարանի զուգարաններում հիգիենայի պարագաների՝ մասնավորապես զուգարանի թղթերի, բացակայության մասին: Մեկ այլ հարցազրույցի ժամանակ ուսանողներից մեկը նշեց, որ դեկանատի աշխատակիցները ֆեյսբուքյան «իվենթների» միջոցով հետևում են ուսանողների տեղաշարժին: Ուսանողը նշեց, որ նույն զուգարանի թղթերի բացակայության հետ կապված միջոցառման օրը, դեկանատի աշխատակիցներից մեկը զանգահարել է իրեն և ասել, թե նա երբ է գալու համալսարան և նաև ավելացրել, որ գալուն պես իրեն տեսնի: Միջոցառման ավարտից հետո, երբ ուսանողը մոտեցել է դեկանատի աշխատակցին, վերջինս նրան ասել է՝

*«Ինչ-որ էջեր ես լայքում, անընդհատ ուշադրության կենտրոնում ես, պետք չի նման բաներ անել: Ես հասկանում եմ որ դա քո անձնական տիրույթն է, բայց հեռու մնա այդպիսի բաներից»:* (ար.ս, 17տ.)

Մեկ այլ ուսանողի խոսքերով, դեկանատ էին կանչել, երբ նա համալսարանում ուսանողների կողմից սկսված «Մեր զեղչն ենք ուզում» շարժման ժամանակ կոչ էր արել ուսանողներին մասնակցել հավաքին: Ուսանողը, փորձելով հիշել դեկանի

խոսքերը, ասաց, որ վերջինս իր հետ խոսում էր շատ բարձր ձայնով՝ «համարյա գոռալով»: Դեկանը ուսանողին խոսակցության ժամանակ ասել է, որ նա այդ ինչ համարձակություն ունի, որ առանց իր հետ համաձայնեցնելու այդպիսի գրառումներ է անում ու ավելացրել՝

*«Եթե ես քեզ նախկինում վստահում էի, ապա այժմ հիասթափված եմ»:  
(Իգ. ս, 20տ.)*

Նույն ուսանողի խոսքերով՝

*«Իմ ֆեյսբուքյան էջը մշտապես հսկվել է դեկանի հանձնարարությամբ: Հաց բերողի մասին հողվածքը իմ էջում տեղադրելու հաջորդ օրը դեկանը ինձ կանչել է իր աշխատասենյակ ու սկսել իր ասելով «հայրաբար» զգուշացնել ինձ՝ նման բաներ չկիսվեմ, եթե ուզում եմ կարիերա ունենալ, նաև նշել, որ ՌԻԽ-ի նախագահը չի կարող նման ինֆորմացիա տեղադրել իր էջում: Ի պատասխան իմ այն ասածի, որ Սահմանադրությունը ամրագրում է խոսքի ազատության սկզբունքը՝ նշեց, որ նման բաները Հայաստանում չեն աշխատում: «...»-ի (ուսանողի անունը) ֆեյսբուքում արած գրառման տակ մեկնաբանություն գրելու հաջորդ օրը դեկանը նորից ինձ իր աշխատասենյակ է կանչել, նորից հանդիմանել մեկնաբանության համար այս անգամ փոխդեկանի ներկայությամբ, ով, ըստ իմ հասկացածի, տեղեկացրել էր դեկանին իմ գրառման մասին, քանի որ դեկանը նրանից էր խնդրում սքրինշոթը ցույց տալ»:  
(Իգ. ս., 20տ.)*

Անձնական տարածքի ներխուժման փորձերից հաջորդը ուսանողների ծնողներին զանգահարելու պրակտիկան է: Երկու ուսանող հարցազրույցի ընթացքում նշել են, որ երբ դեկանատի աշխատակիցները մի քանի անգամ իրենց դեկանատ կանչելուց հետո հասկացան, որ այն ճանապարհով չեն կարողանում ազդել իրենց ուսանողական-քաղաքացիական ակտիվության վրա, զանգահարել են իրենց ծնողներին և ասել, որ մտահոգված են իրենց երեխաների վարքագծով: Դեկանատի աշխատակիցները ծնողներին ասել են, որ ուսանողները հաճախ են բացակայում դասերից և իրենք չգիտեն, թե նրանք այդ ժամանակ ինչ են անում, մինչդեռ իմացել են, որ մասնակցում են ուսանողական հավաքներին: Ակնհայտ է, որ այս ճանապարհով փորձ է արվել ծնողներին անհանգստացնել և ապատեղեկատվություն տալով, օգտագործելով ծնողական սրտացավությունը, լարել իրենց սեփական երեխաների դեմ:

Ուսանողների սոցցանցերի (մասնավորապես ֆեյսբուքյան) էջերը դիտելու կամ զիննելու պրակտիկան խորթ չէ նաև համալսարանի վարչակազմի ավելի բարձր ներկայացուցիչներին: Ուսանողներից մեկը հարցազրույցի ժամանակ նշեց, որ սառը վերաբերմունքի է արժանացել համալսարանի աշխատակիցների կողմից, երբ հավանել է «Ռեստարտի» գրառումները, վերջիններս նրա այդ արարքը որակավորել են հակամալսարանական և ասել, թե նա դուրս է եկել իրենց դեմ՝ ընկնելով դրսից ֆինանսավորվող ուսանողների ջրերը:

- *Վարչական ռեսուրսի կիրառում, ուսանողների մասնակցության ապահարախուսում*

Հարցազրույցները ցույց տվեցին, որ համալսարանական վարչակազմի կողմից հաճախ չարաշահվում է սեփական պաշտոնական դիրքը ուսանողներին ճնշելու, սեփական կարծիքը պարտադրելու և ուսանողներից տեղեկություն կորզելու համար: Հարցազրույցի ժամանակ ուսանողներից մեկը նշեց, որ 2013թ. համալսարանում տեղի ունեցող դասադուլի ժամանակ դեկանատները դասադուլի մասնակից ուսանողների տվյալները փոխանցում էին ԱԱԾ, և վերջիններս փորձում էին ազդել ուսանողների վրա, եթե նրանք ունեին պետական համակարգում աշխատող բարեկամներ: Հարցազրույցի մասնակիցը նշեց, որ իր վրա փորձել են ազդել տարբեր ճանապարհներով, այդ թվում՝ բարեկամին աշխատանքից հեռացնելու սպառնալիքով: Նա նաև ավելացրեց, որ դեկանը հաճախ դասադուլների ժամանակ իջնում էր բակ և կոչ անում ուսանողներին գնալ դասի, իր իսկ հետ լարվել էր այն աստիճանի, որ դիպլոմային աշխատանքի պաշտպանություն ժամանակ հատուկ ցածր գնահատական նշանակեց: Ուսանողներից մեկը նաև պատմեց, որ իր դեկանը փորձել է իր վրա ազդել և ստիպել, որ համալսարանի գիտական խորհուրդում ներկայացվի իր նախընտրած ուսանողը և առանց իր «դաբրոյի» ոչ մեկին չընդունել:

Հարցազրույցների ժամանակ ուսանողներից մի քանիսը նշեցին, որ դեկանատի աշխատակիցները պարբերաբար իրենց «հայրական» խրատներ են տվել չմասնակցել ուսանողական և այլ քաղքացիական նախաձեռնությունների: Հարցազրույցներին մասնակցող ուսանողներից շատերը նշեցին, որ Թավշյա հեղափոխության նախօրեին իրենց դեկանատները ավելի խստացրել էին բացականների նշանակման գործընթացը և նշում էին, որ այն ուսանողները ովքեր շատ կբացակայեն կստանան նկատողություններ և չեն բացառվում նաև հեռացումները: Մեջբերում հարգազրույցից՝

*«Քեզ խորհուրդ եմ տալիս, որ չմասնակցես ցույցերին որովհետև բոլորին կգր ֆիքսում է, ծնողներիդ ուզում էս վատ դրության մեջ գցե՞ս, աշխատանքի ընդունվելուց կարող է քեզ ֆիքսած լինեն ու դժվար լինի: Հետո ասեց ճիշտ ա, կարողա դու քո ինտելեկտով կարողանաս ընդունվես աշխատանքի, բայց հետո ծնողներիդ նկատմամբ էլ ճնշումներ լինեն, գործից կհեռացնեն»:* (Իգ. ս, 21տ. )

Համալսարանական վարչակազմը նաև հաճախ փորձել է լրացուցիչ արհեստական խոչընդոտներ ստեղծել քաղաքացիական ակտիվությամբ աչքի ընկնող ուսանողների համար: Ուսանողներից մեկը նշեց, որ այն օրը, երբ նա նկարվեց ԵՊՀ դեկավարության կողմից ֆինանսների անարդյունավետ միջոցների ծախսման մասին պատմող տեսանյութում, իրեն զանգահարել են դեկանատից և ասել, որ նա ներկայանա ամբիոն, քանի որ ունի պակաս փաստաթղթեր, բայց երբ գնացել է ամբիոնի աշխատակցուհին ոչինչ չի ասել՝ ասելով, որ սխալվել են:

Վարչական ռեսուրսի օգտագործվել է նաև ԵՊՀ ՈՒԽ-ի կողմից: Հարցազրույցի ժամանակ ուսանողներից մեկը նշեց, որ այն դեպքից հետո, երբ իրենց ֆակուլտետի ՈՒԽ-ի սենյակում տեղի է ունեցել «Հանուն գիտության զարգացման»

Նախաձեռնության հանդիպումը, հաջորդ օրը ԵՊՀ փոխնախագահը ստիպել է իրեն հանձնել այդ սենյակի բանալիները:

- *Ուսանողներին պիտակավորում, թերազնահատում և հակուսանողական վարքագիծ*

Հարցազրույցները ցույց տվեցին, որ համալսարանում համատարած բնույթ է կրել ակտիվ ուսանողներին պիտակավորելը և արժեզրկելը: Ուսանողներից մեկը նշեց, որ 2013 թվականին դասադուլի ժամանակ իրենց դեկանը մտել է լսարան և ասել հետևյալը՝

*«Ես շատ ուրախ եմ, որ դուք չեք մասնակցում այդ ակցիաներին, ես գիտեի որ դուք դաստիարակված երեխաներ եք»:* (իգ. ս, 17տ. )

Ուսանողներից մի քանիսը հարցազրույցների ժամանակ նշեցին, որ դեկանատի աշխատակիցները հաճախ ասում են, որ համալսարանի դեմ բոլոր ուսանողները հիմնականում ֆինանսավորվում են արտերկրից և նրանց գործունեությունը ուղղորդվում է: Ուսանողներից մեկը մի դեպք պատմեց Թավշյա հեղափոխության օրերից նշելով, որ երբ իր կուրսի հետ դուրս էր գալիս համալսարանից, որպեսզի միանար ցուցարարներին, ֆակուլտետի փոխդեկանը նրան կանգնացրել է և բարձր տոնով ասել՝ «*Էդ ու՞ր ես տանում էդ ուսանողներին, հո ոչխար չե՞ն*»: Իսկ հարցին, թե «*Ինչի՞ ես գորռում*», պատասխանել է՝ «*որ գլուխդ մտնի*» (ար. ս, 23տ. ):

- *Քննադատողական մտածողության ապահրախոսում*

Մի շարք ուսանողներ նշեցին, որ լսարանային քննարկումների ժամանակ դասախոսները հաճախ նախկին իշխանությունների անուղղակի քարոզն էին անում, իսկ այն ժամանակ, երբ իրենք փորձել են այլ կարծիք հայտնել կամ քննադատել, դասախոսը իրենց ասել է, որ լսարանում քաղաքական հարցեր չեն քննարկելու և պետք չէ բուհը քաղաքականացնել: Ուսանողներից մեկը նաև նշեց, որ մի շարք դասախոսներ հեղափոխության ժամանակ ասում էին, որ պետք չէ մոռանալ Ադրբեյջանի մասին, ով պատրաստ է ամեն վայրկյան նոր պատերազմ հրահրել: Ուսանողներից մեկը նշեց, որ դասախոսների մեծամասնության կողմից ընդհանրապես չի խրախուսվում քննադատական մտածողությունը, առավելևս երբ դա հակադրում է իրենց կարծիքին: Դեռ գործում են սովետական ԿԳԲ-ական բարքերը, քանի որ դասախոսներից մեկը մյուսի մասին լսարանում բամբասել էր, ուսանողն էլ փոխանցել էր տվյալ դասախոսին ու նա փոխանակ սաստելու, որ պետք չէ նման բաններով զբաղվել, խնդրել էր էլի պատմել, եթե նման դեպք կրկնվի:

- *ՈՒԽ-ի դերը և նշանակությունը*

Հարցազրույցների ժամանակ ուսանողները անդրադարձան նաև ուսանողական խորհուրդներն: Հիմնականում ուսանողները չեն ընկալում ՈՒԽ-ը, որպես իրենց շահերը պաշտպանող կառույց: Ուսանողներից մեկը նշեց, որ իր խնդիրներով ՈւԽ-ին երբեք չի դիմել, քանի որ այն գոյություն չունի, և ուղղակի կառույց է, որ իզուր

օգտագործում է ֆինանսական միջոցներ: Հեռակա բաժնում ՌԻՄ-ը ընդհանրապես գոյություն չունի, իսկ ինքը երբեք ՌԻՄ-ին որևէ հարցով չի դիմել: Մասնակիցներից մեկը նշեց, որ ՌԻՄ-ին հիմնականում ընկալել է որպես կառույց, որը հարթակ է հանդիսացել ՀՀԿ-ը անդամակցելու համար: 2013թ. դասադուլին մասնակցած ուսանողներից մեկը նշեց, որ ուսանողական խորուրդն էր դեկանատներին տեղյակ պահում, թե որ ուսանողներն են մասնակցում դասադուլին, իսկ այն հարցին, թե իր խնդիրների ժամանակ նա փորձել է դիմել ՌԻՄ-ին նա պատասխանեց, որ դա կարծես ծիծաղելի է, քանի որ այդ ընթացքում հենց ՌԻՄ-ն էր փորձում ճնշել ուսանողներին (ինչը նաև հնարավոր է տեսնել առցանցում գոյություն ունեցող տեսանյութերի միջոցով):<sup>3</sup>

- *Համալսարանի խնդիրների բարձրաձայնման որակումը որպես հակահամալսարանական գործունեություն*

Որակական տվյալները ցույց են տալիս, որ համալսարանական վարչակազմը, ՌԻՄ իրենց փորձում են նույնացնել համալսարանի հետ: Փորձելով ետ քաշել ուսանողներին քաղաքացիական – ուսանողական ակտիվ գործընթացներից՝ նրանք հաճախ համալսարանի խնդիրները բարձրաձայնող ուսանողներին որակել են հակահամալսարանականներ և մարդիկ, ովքեր չեն ուզում համալսարանի բարեվարքությունն ու առաջընթացը: Զննադատությունները և խնդրի հրապարակումները բնութագրվել են որպես համալսարանի վարկանիշը խաթարող քայլեր: Այս քայլով վարչակազմը փորձել է զբաղեցնել պաշտպանողական դիրք, խնդիրները բարձրաձայնող ուսանողներին փորձել մարգինալացնել՝ խեղաթյուրելով նրանց նպատակները և շարժառիթները:

- *Ուսանողներից տեղեկատվության հավաքագրում*

Որակական տվյալները նաև ցույց տվեցին, որ դեկանատների կողմից չարաշահվել է ավագների ինստիտուտը: Ուսանողների հետ հարցազրույցները ցույց տվեցին, որ մի շարք դեկանատներ փորձել են ավագների միջոցով տեղեկանալ, թե կուրսի ուսանողներից, ովքեր են մասնակցում ուսանողական տարբեր ակցիաների, ովքեր են դասերի ժամանակ խոսում համալսարանի խնդիրների մասին: Նախկինում ավագ հանդիսացող ուսանողներից մեկի մեջբերում՝

*«Մտնում եմ դեկանի աշխատասենյակ, և դեկանը հարցնում է, թե դասի է «...» (ուսանողի անունը), թե ոչ: Ես պատասխանում եմ, որ դասամիջոցին դուրս է եկել և հիմա ուր որ է հետ կվերադառնա: Եվ դեկանը սկսեց ինձ հարցեր տալ, թե դասերի ժամանակ ինչ են խոսում, ինչ են քննարկում: Եվ դեկանը ինձ ասաց, որ ամեն ինչ իրեն պատմեմ, թե ինչ են խոսում ակտիվ ուսանողները և դասախոսները, « . . . »-ը (ուսանողի անունը) հաճախում է դասերին թե ոչ: Նա ասեց՝ « . . . »-ին*

<sup>3</sup> Տեսանյութերի հղումներ՝ <https://www.youtube.com/watch?v=Uy5kOx5K33E>; <https://www.youtube.com/watch?v=Myl-GIXr0oo>; <https://www.youtube.com/watch?v=ATRj-XuDMmw>; <https://www.youtube.com/watch?v=OT8YIX3AoBI>; <https://www.youtube.com/watch?v=lebFV4lwWNA>

*(ուսանողի անունը) աչքիդ տակ պահի, և խոսք տվեց, որ ոչ ոք չի իմանա: Այդ դեպքից հետո ամեն անգամ, երբ միջանցքներում պատահական հանդիպում էի դեկանին նա ինձ «. . .»-ի մասին հարցեր էր տալիս, թե նա եկե՞լ է, դասի՞ է, ո՞նց է իրեն պահում, դասերին ի՞նչ է քննարկում: Եվ տպավորություն կար, որ բացի ինձնից ուրիշ մարդկանցից էլ է ինֆորմացիա հավաքում»: (Իգ. ս, 21տ. )*

## Եզրակացություններ

Այս ուսումնասիրության արդյունքում կարելի է արձանագրել, որ տարիներ շարունակ ԵՊՀ-ը չի եղել ինքնավար կառույց, իսկ ուսանողական ինքնակառավարումը և ԵՊՀ վարչակազմը գործել են քաղաքական ազդեցության ներքո: ՀՀԿ-ն ունեցել է զսպող լծակներ ՈՒԽ-ի վրա, իսկ շատ դեպքերում հենց ուսանողական խորհուրդն է հանդիսացել զսպող լծակ: ԵՊՀ-ում ուսանողական ակտիվությունը չի բխել ՀՀԿ-ի շահերից, իսկ ուսանողությունը վերահսկվել է ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոնի միջոցով: ՀՀԿ անդամ չհանդիսացող պաշտոնյաներ ուսանողական խորհրդում չունենալը և ԵՊՀ ՈւԽ-ի կանոնադրության առաջին տողերում չեջտելը, թե ՈՒԽ-ը հանդիսանում է ապաքաղաքական և ապակուսակցական կազմակերպություն, ուղղակի, միտումնավոր կերպով ուսանողներին մոլորության մեջ զգելու գործիք է ծառայել:

Ակտիվ ուսանողները մշտապես եղել են բուհի վարչակազմի «ուշադրության կենտրոնում», իսկ ՈՒԽ-ը հիմնականում անմասն է մնացել ակտիվ ուսանողների շահերը պաշտպանելուց: ՈՒԽ-ը իր երկու հիմնական խնդիրները՝ *նպաստել ուսանողների ակտիվ քաղաքացիական կեցվածքի ձևավորմանը և իրավագիտակցության մակարդակի բարձրացմանը՝* ձախողել է: Ինչպես ուսումնասիրությունը ցույց է տալիս, համալսարանում տեղի ունեցած բազմաթիվ շարժումներից, նախաձեռնություններից և ոչ մեկում ՈՒԽ-ը ներգրավված չի եղել:

ՈՒԽ-ը ունեցել է հիմնականում ֆինանսական երկու աղբյուրներ՝ համալսարանից և Հայաստանի երիտասարդական հիմնադրամից: Երկու դեպքում էլ ֆինանսական միջոցները օգտագործվել են հիմնականում ժամանցային միջոցառումներ կազմակերպելու համար, բայց տարատեսակ փաստաթղթերում բացակայում է որևէ տեղեկատվություն ծախսված գումարների նպատակաուղղվածության մասին, բացակայում են իրականացված միջոցառումների հաշվետվությունները, բացառությամբ ընդհանուր ծրագրի համար հատկացված գումարներից:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ԵՊՀ-ում ՈՒԽ-ը ուսանողների շրջանում հիմնականում չի ընկալվում որպես ուսանողների շահերը պաշտպանող կառույց, չունի ամրագրված իրավական կարգավիճակ և չի պահպանել իր իսկ կանոնադրության կողմից հաստատված կանոնները և նորմերը, որի արդյունքում էլ լրջորեն տուժել են վերջինիս գործունեության թափանցիկության և հաշվետվողականության



բաղադրիչները: Վերոնշյալ խնդիրների լուծման համար անհրաժեշտ է բազմակողմանի և համակարգային մոտեցում: Ստորև ներկայացված են այս ուսումնասիրության արդյունքում ձևակերպված առաջարկությունները:

## Առաջարկություններ

ՈւԽ-ի ոչ ուսանողակենտրոն գործունեության և բուհի վարչակազմի հետ ակտիվ համագործակցության հիմնական պատճառներից է բուհում ուսանողական այլընտրանքային կառույցների բացակայությունը: Առաջարկվում է, որ բուհում գործեն մի քանի ուսանողական կազմակերպություններ, որի արդյունքում կստեղծվի մրցակցություն, որն իր հերթին կհանգեցնի ուսանողական կազմակերպությունների շարունակական զարգացմանը: Նման զարգացումը նաև հնարավորություն կընձեռնի ուսանողներին այլընտրանք ունենալ և ուսանողներին բուհի կողմից տրամադրվող բոլոր ռեսուրսները չեն կենտրոնանա միայն մեկ ուսանողական կառույցի ազդեցության ներքո: Յուրաքանչյուր ուսանողական կազմակերպություն (կամ խումբ) կարող է ունենալ ուսանողների ինքնակառավարման իր տեսլականը և մասնակցայնության ու բազմակարծության սկզբունքներով այն զարգացնելու իր գաղափարները: Սակայն, ուսանողական մի քանի կազմակերպություններ ստեղծելու հնարավորությունը առաջ է բերում մի քանի հարցեր, օրինակ՝ *ո՞ր ուսանողական կազմակերպությունն է բուհի կողմից ստանալու ֆինանսավորում կամ զույքային ապահովում, առավելագույնը քանի՞ ուսանողական կառույցներ կարող են գործել բուհում, ո՞վ կամ ինչպե՞ս է ապահովվելու ուսանողների ներկայացուցչությունը բուհի կառավարման խորհրդում, և այլն:* Նման հարցադրումներին պատասխաններ տրամադրելու նպատակով, այս ուսումնասիրության շրջանակներում ներկայացված է առաջարկության հիմնական տեսլականը՝<sup>4</sup>

**Ստեղծել ուսանողական խորհրդարան՝ ԵՊՀ ՌԲսանողական խորհուրդը պառլամենտարիզմի<sup>5</sup> սկզբունքով ձևավորելու --** ընտրությունների ժամանակ առավելագույն ձայներ հավաքած թիմին որոշումներ կայացնելու հնարավորության ընձեռելու և տարբեր ուսանողական նախաձեռնություններից ու թիմերից բաղկացած (տարբեր տեսլականներով ու գործելաոճերով) ուսանողական ներկայացուցչական մարմնի ստեղծելու նպատակով, որի համար անհրաժեշտ է՝

<sup>4</sup> Այս ուսումնասիրության արդյունքում ձևակերպված վերը նշված առաջարկության առավել մանրամասն նկարագրության և ձևակերպման համար անհրաժեշտ են հանրային քննարկումներ, մասնագիտական խորհրդատվություններ և միջազգային փորձի ուսումնասիրություն:

<sup>5</sup> Օգտագործված անվանումները պայմանական են, և ընտրված են առաջարկությունը առավել հասկանալի դարձնելու նպատակով:

- **Որոշել** մանդատների չափաքանակ՝ համալսարանի ուսանողների ընդհանուր քանակի և կառուցվածքի համաձայն,
- **Կազմել** թիմեր՝ ընտրություններին ուսանողների մասնակցության և խորհրդարանում մանդատներ ստանալու նպատակով,
- **Ընձեռել** բոլոր ուսանողներին թիմեր կազմելու հնարավորություն,
- **Սահմանել** նվազագույն շեմ խորհրդարանում տարբեր թիմեր ունենալու և հակակշիռներ ստեղծելու նպատակով (օրինակ՝ երեք թիմերի ներկայացվածություն),
- **Ավելացնել** հստակ կետեր՝ մեկ թիմի գերակշիռ դերից խուսափելու համար (օրինակ՝ մեկ թիմը չի կարող գլխավորել ուսանողական խորհրդարանը երկու անընդմեջ պաշտոնավարումից հետո):

- Ուես գործունեության կարգ

Մշակել ուսանողական խորհուրդների գործունեության և սկզբնավորման կարգ,<sup>6</sup> որպես՝ ԵՊՀ-ի ուսանողների համար առավել արդյունավետ միջոց կուսակցական և վարչական ազդեցություններից, ուղղորդումից և պասիվ ուսանողական կառույցներից ազատվելու նպատակով: ԵՊՀ-ն ունի 19 ֆակուլտետներ և գրեթե բոլոր բաժիններում առկա են ֆակուլտետային ուսանողական խորհուրդներ:

- Ընտրական գործընթացների դյուրացում

Վերը նշված առաջարկը առավել դյուրին է դարձնում նաև ընտրական գործընթացները: Ներկայումս յուրաքանչյուր բաժնում իրականացվում են ֆակուլտետային նախագահի ընտրություններ (ոչ ուղիղ), յուրաքանչյուր կուրսում իրականացվում են պատվիրակների ընտրություններ՝ 25 ուսանողից մեկ պատվիրակ, ինչը նշանակում է մոտ 500-ից ավելի պատվիրակներ պետք է ընտրվեն, որոնք տարբեր եղանակներով ընտրում են նախագահություն, իսկ նախագահությունը՝ Ուես նախագահ: Այս ընտրական մեխանիզմը չափազանց խրթին է, ինչպես նաև ներկայիս Ուես սահմանված կարգով իր բոլոր ընտրությունները չի կազմակերպել և չի կարողացել պատասխանել իրեն ուղարկված հարցմանը, ըստ որի՝ պահանջվում էր ներկայացնել բոլոր պատվիրակների ընտրման տարեթվերը և անվանացանկը: Այս նոր խորհրդարանական համակարգը թույլ է տալիս մեկ ընտրությամբ որոշելու Ուես ընդհանուր կառուցվածքը, նոր ուսանողական խորհրդի/խորհրդարանի ֆակուլտետային պատասխանատուներին նշանակում է խորհրդարանի կողմից ընտրված նախագահը՝ խորհրդարանի առաջարկությամբ:

- Ուես-ի ֆինանսավորում

Ուես-ի ֆինանսավորումը պետք է լինի կամ ընտրական՝ յուրաքանչյուր ուսանող պետք է ինքը որոշի արդյոք հատկացնել համապատասխան գումար ուսանողական

---

<sup>6</sup> Համագործակցելով ՀՀ Կրթության և Գիտության նախարարության, այլ բուհերի ուսանողական խորհուրդների ու ղեկավարությունների հետ: Փաստաթուղթը կարող է է նախատեսված լինել և հետագայում դիտարկվել ՀՀ բոլոր պետական բուհերում կիրառելու համար:

խորհրդին, թե ոչ: Նման փոփոխությունը թույլ կտա, որ ՌԻԽ-ի անդամները առավել մոտիվացված կերպով հանդես գան՝ որպես ուսանողների շահերը պաշտպանող և ներկայացնող կազմակերպություն: ՌԻԽ-ը բուհի ընդհանուր ուսանողությունից ուղիղ կախվածություն կունենա իր գոյությունը պաշտպանելու միտումով: Մինչ այս ՌԻԽ-ների բյուջեն հաստատվում էր ԵՊՀ Հոգաբարձուների խորհրդի կողմից, ինչը նույնպես ազդել է ՌԻԽ-ների ինքնավարության վրա:

▪ Արձանագրությունների ինստիտուտ

Ուսանողական նոր կառույցի գործունեության մեջ հարկավոր է ավելացնել արձանագրությունների ինստիտուտը: Ներկայիս փորձը ցույց է տալիս, որ ուսանողական խորհուրդի ներքին մարմինների նիստերը, հանդիպումները հիմնականում չեն արձանագրվում, հետևաբար, պետք է արձանագրվեն և արդյունքները լինեն պարտադիր հրապարակման ենթակա՝ ՌԻԽ-ի գործունեության թափանցիկությունը և հաշվետվողականությունը ապահովելու նպատակով: Ներկայիս ՌԻԽ-ի ընտրությունները արձանագրված չեն:

**Այսպիսով, ուսանողական նոր ներկայացուցչական մարմինը պետք է՝**

- (1) հնարավորություն ընձեռի համալսարանում գործելու մի քանի ուսանողական խմբերի, (2) ֆինանսապես կախում չունենա բուհի վարչակազմից, (3) գործի առավել հաշվետու եղանակով և (4) բացառի միևնույն անհատի կամ խմբի երկարատև պաշտոնավարումը:**

▪ ԵՊՀ ուսանողների կենտրոնի գործունեություն

Այս ուսումնասիրության արդյունքում, նույնպես առաջարկվում է վերանայել ԵՊՀ Ուսանողների հետ տարվող աշխատանքների կենտրոնի գործունեության նպատակը և կատարել վերաիմաստավորում, այս պարագայում իմաստ ունի կառույցը կցել ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ կապերի գծով պրոռեկտորի վարչությանը, հակառակ դեպքում նման կառույցի գոյությունը ԵՊՀ-ում խնդրահարույց է, քանի որ վերջինիս իրականացնում է, ոչ թե այլ բաժիններից նմանակաձ գործառույթները, այլ վերահսկում ԵՊՀ-ում ուսանողական ինքնակառավարումը: Կառույցի նման ձևով աշխատելը լի է տարբեր վնասներով, եթե տեղի ունենա գործառույթների վերաձևակերպում և իմաստավորում, ապա այդ պարագայում գուցե իմաստ կունենա ունենալ նման կառույց:

# Հավելված 1 ԵՊՀ ՈՒԽ Կանոնադրություն

## Ընդունված է

Երևանի պետական համալսարանի ուսանողական  
խորհրդի 2014թ. դեկտեմբերի 19-ին  
կայացած համագումարում

ՈՒԽ նախագահ

Ռ. Քարամյան

ՈՒԽ պատ. քարտուղար

Լ. Սահակյան

## ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ (փոփոխություններով և լրացումներով)

### 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1. Երևանի պետական համալսարանի Ուսանողական խորհուրդը (այսուհետ՝ ԵՊՀ ՈՒԽ) ԵՊՀ-ում գործող ուսանողական կազմակերպություն է, որը ԵՊՀ ուսանողության ինքնակառավարման, ընտրովի ներկայացուցչական և նրա ընկերային շահերը ներկայացնող ընտրովի մարմինն է:
- 1.2. ԵՊՀ ՈՒԽ-ն ապաքաղաքական և ապակուսակցական կազմակերպություն է:
- 1.3. ՈՒԽ-ն արտահայտում և պաշտպանում է ուսանողության շահերը, նպաստում նրանց կրթական, գիտական, ստեղծագործական, ֆիզիկական, բարոյական և հոգևոր զարգացմանը:
- 1.4. ԵՊՀ ՈՒԽ-ն իր գործունեությունն իրականացնում է ՀՀ Սահմանադրությանը, ՀՀ գործող օրենսդրությանը, ԵՊՀ կանոնադրությանը և սույն կանոնադրությանը համապատասխան: ԵՊՀ ՈՒԽ կանոնադրությունը ընդունվում է ՈՒԽ համագումարի կողմից:
- 1.5. ԵՊՀ ՈՒԽ-ն ունի անկյունային դրոշմ, պաշտոնաթուղթ և իր գործունեությամբ ու նվիրատվությամբ ձեռք բերած ֆինանսական միջոցները տնօրինելու իրավունք՝ ԵՊՀ-ում սահմանված ընթացակարգերի համաձայն:
- 1.6. ԵՊՀ ՈՒԽ-ի լրիվ անվանումն է՝ հայերեն՝ Երևանի պետական համալսարանի ուսանողական խորհուրդ, ռուսերեն՝ Студенческий совет Ереванского государственного университета, անգլերեն՝ Student Council of the Yerevan State University:
- 1.7. ԵՊՀ ՈՒԽ-ի հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1, Երևանի պետական համալսարան:

## 2. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 2.1. ԵՊՀ ՈՒԽ-ի նպատակներն ու խնդիրներն են՝
- ա/ պաշտպանել ուսանողների շահերն ու իրավունքները,
  - բ/ ապահովել ուսանողների մասնակցությունը համալսարանի կառավարմանը,
  - գ/ համալսարանի կառավարման համապատասխան մարմինների քննարկմանը ներկայացնել ուսանողությանն առնչվող հարցեր,
  - դ/ մասնակցել ուսումնական գործընթացի կազմակերպմանը և ուսուցման արդյունավետության բարձրացմանն ուղղված ծրագրերի մշակմանն ու իրականացմանը,
  - ե/ իրազեկել ուսանողներին իրենց իրավունքների ու պարտականությունների մասին, նպաստել ուսանողների իրավագիտակցության մակարդակի բարձրացմանն և ակտիվ քաղաքացիական կեցվածքի ձևավորմանը
  - զ/ միավորել համալսարանի ուսանողական կազմակերպությունների, ակումբների և միությունների ջանքերը՝ նպաստելու ուսանողության համար բարենպաստ միջավայրի ձևավորմանը և խթանելու ուսանողների գիտական, կրթական, հոգևոր, մշակութային, ստեղծագործական ու ֆիզիկական զարգացմանը,
  - է/ աջակցել ուսանողների սոցիալական վիճակի բարելավմանը, կազմակերպել ուսանողների ազատ ժամանցն ու հանգիստը,
  - ը/ մասնակցել ԵՊՀ տարածքում ներքին կարգապահության պահպանմանը,
  - թ/ ինչպես նաև լուծել սույն կանոնադրության 2.1 կետում չնշված ուսանողներին հուզող խնդիրները:
- 2.2. ԵՊՀ ՈՒԽ-ն իր գործունեությունը ծավալում է՝ ելնելով նշված նպատակներից ու խնդիրներից: Այն համագործակցում է ՀՀ-ում և արտերկրում գործող բուհական, ուսանողական, երիտասարդական և այլ կազմակերպությունների, ինչպես նաև մասնավոր անձանց հետ՝ փոխհարաբերությունները կառուցելով պայմանագրային և համագործակցության ու փոխշահավետության հիմունքներով:
- 2.3. ՈՒԽ-ն սահմանված կարգով կարող է իրականացնել հրատարակչական գործունեություն:

## 3. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

- 3.1. ԵՊՀ ՈՒԽ համագումարի պատվիրակների, ԵՊՀ ՈՒԽ-ի, ֆակուլտետային ՈՒԽ-ների ընտրությունները կազմակերպում է ԵՊՀ ՈՒԽ ընտրական հանձնաժողովը (հետայսու՝ ընտրական հանձնաժողով):
- 3.2. Ընտրական հանձնաժողովը բաղկացած է թվով 11 հոգուց, որոնցից 4-ը ներկայացվում են ԵՊՀ ՈՒԽ նախագահության, 4-ը՝ ԵՊՀ ռեկտորատի, 2-ը՝ ԵՊՀ



- Արհեստակցական կազմակերպության և 1-ը՝ ԵՊՀ Ուսանողական գիտական ընկերության նախագահության կողմից:
- 3.3. Ընտրական հանձնաժողովի նախագահը և քարտուղարը ընտրվում են հանձնաժողովի կազմից՝ ընտրական հանձնաժողովի առաջին նիստում:
- 3.4. Ընտրական հանձնաժողովը՝
- ա/ հաստատում է իր գործունեության աշխատակարգը և ընտրությունների կազմակերպման ընթացակարգը,
  - բ/ կազմում է ընտրությունների ժամանակացույցը,
  - գ/ անհրաժեշտության դեպքում որոշում է կայացնում ընտրություններում ներկայացուցչական համամասնության վերաբերյալ (ընտրությունների ըստ կուրսի հոքերի ու խմբերի կազմակերպում և այլն),
  - դ/ ամփոփում և հաստատում է ընտրությունների արդյունքերը,
  - ե/ եռօրյա ժամկետում քննարկում է ընտրությունների կապակցությամբ ներկայացված բողոքները. ընտրությունների ելքի վրա ազդած կանոնակարգային խախտումների դեպքում որոշում է կայացնում ընտրություններն անվավեր ճանաչելու մասին,
  - զ/ ԵՊՀ Ուսս պատվիրակների ընտրություններից հետո հրավիրում և կազմակերպում է ԵՊՀ Ուսս նոր գումարման անդրանիկ Համագումարը,
  - է/ կանոնակարգում է սույն կանոնադրությամբ Ուսս ընտրություններին վերաբերող չկանոնակարգված հարցերը:
- 3.5. Ընտրական հանձնաժողովի անդամները չեն կարող ընտրվել ֆակուլտետային Ուսս-ի անդամ, Ուսս Համագումարի պատվիրակ:
- 3.6. Ընտրական հանձնաժողովի նիստն իրավագոր է, եթե դրան մասնակցում են անդամների թվի կեսից ավելին: Որոշումներն ընդունվում են ներկաների ձայների պարզ մեծամասնությամբ:
- 3.7. Ընտրությունների արդյունքները կամ ընտրական հանձնաժողովի որոշումները կարող են բողաքարկվել գրավոր ընթացակարգով՝ հրապարակումից հետո 24 ժամվա ընթացքում:

#### 4. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

- 4.1. ԵՊՀ Ուսս բարձրագույն մարմինը Ուսս Համագումարն է: Համագումարին լիիրավ ձայնի իրավունքով մասնակցում են ֆակուլտետների պատվիրակները, ֆակուլտետային ուսանողական խորհուրդների նախագահները, ԵՊՀ Ուսանողական գիտական ընկերության, ԵՊՀ Արհեստակցական կազմակերպության մեկական լիազոր ներկայացուցիչները:
- 4.2. Համագումարի պատվիրակների կազմը համալրվում է երկու տարին մեկ անգամ կազմակերպվող Ֆակուլտետների պատվիրակների ուղղակի ընտրության միջոցով:

- Պատվիրակներն ընտրվում են ֆակուլտետների յուրաքանչյուր կուրսից (հոսքից)՝ ըստ համամասնության՝ 25 ուսանողից մեկ պատվիրակ:
- 4.3. Ընտրություններին մասնակցում են բակալավրիատի և մագիստրատուրայի բոլոր կուրսերը: Բակալավրիատի 1-ին կուրսում ընտրությունները կարող են անցկացվել միայն 1-ին կուրսի 2-րդ կիսամյակում:
- 4.4. Պատվիրակ կարող են դառնալ այն ուսանողները, որոնք վերջին երկու կիսամյակում ապահովել են ՄՈԳ-ի 65 տոկոսը, իսկ առաջին կուրսի դեպքում դիտարկվում է միայն մեկ կիսամյակի արդյունքները:
- 4.5. Ընտրությունը կատարվում է ըստ կուրսերի (հոսքերի)՝ ուսանողական ժողովներում: Ժողովը իրավագոր է, եթե ներկա են ուսանողների կեսից ավելին: Ընտրությունը կատարվում է բաց քվեարկությամբ, եթե ներկաների ձայների թվի պարզ մեծամասնությամբ այդ մասին այլ որոշում չի կայացվում: Եթե երկու անգամ հրավիրված ժողովին չի մասնակցում ուսանողների կեսից ավելին, ապա ընտրական հանձնաժողովը կարող է որոշում ընդունել և ընտրությունները կազմակերպել ներկա ուսանողների մասնակցությամբ: Ընտրված է համարվում առավելագույն ձայներ հավաքած թեկնածուն:
- 4.6. ՈՒԽ Համագումարը հրավիրվում է առնվազն երեք տարին մեկ անգամ՝ ՈՒԽ նախագահության կողմից: Անհրաժեշտության դեպքում ՈՒԽ նախագահությունը կարող է հրավիրել արտահերթ համագումար: Արտահերթ Համագումար կարող է գումարվել նաև Համագումարի պատվիրակների 1/2-ի պահանջով:
- 4.7. Համագումարը՝  
 ա/ ընդունում է ՈՒԽ-ի կանոնադրությունը, փոփոխություններ և լրացումներ կատարում նրանում,  
 բ/ լսում և հաստատում է ՈՒԽ նախագահության տարեկան հաշվետվությունը,  
 գ/ քննարկում և սահմանում է ՈՒԽ-ի տարեկան գործունեության կարևորագույն ուղղությունները և առաջիկա տարվա ծրագրային առաջնությունները,  
 դ/ որոշում է կայացնում ՈՒԽ-ի վերակազմավորման վերաբերյալ,  
 ե/ հաստատում է նախագահության կազմը (բաց քվեարկությամբ),  
 զ/ ընտրում է ՈՒԽ վերստուգիչ հանձնաժողովի անդամներին:
- 4.8. Համագումարը իրավագոր է, եթե ներկա են պատվիրակների ընդհանուր թվի կեսից ավելին: Սույն կետի ա/ և դ/ ենթակետերով սահմանված հարցերը քննարկելիս որոշումներն ընդունվում են Համագումարի պատվիրակների ներկաների թվի 2/3-ի կողմ քվեարկելու դեպքում, իսկ մյուս հարցերը՝ ներկաների ձայների պարզ մեծամասնությամբ:



## 5. ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆԸ

- 5.1. Համագումարների միջև ընկած ժամանակաշրջանում ՈՒԽ աշխատանքները ղեկավարում է ԵՊՀ ՈՒԽ նախագահությունը:
- 5.2. ՈՒԽ նախագահության անդամներն ընտրվում են ֆակուլտետի պատվիրակների նիստում՝ բաց քվեարկությամբ, եթե ներկաների ձայների թվի պարզ մեծամասնությամբ այդ մասին այլ որոշում չի կայացվում: Նախագահության կազմը հաստատվում է Համագումարի կողմից:
- 5.3. ՈՒԽ նախագահության անդամ կարող են ընտրվել բակալավրիատի ուսանողները, որոնք վերջին երկու կիսամյակում ապահովել են ՄՈԳ-ի 65 տոկոսը: Առաջին կուրսի դեպքում դիտարկվում են միայն մեկ կիսամյակի արդյունքները:
- 5.4. Նախագահության անդամներն ընտրվում են ըստ համամասնության. մինչև 600 ուսանող ունեցող ֆակուլտետներից՝ մեկ անդամ, 600-ից ավել ուսանող ունեցող ֆակուլտետներից՝ 2 անդամ:
- 5.5. Ֆակուլտետային պատվիրակների նիստը իրավագոր է, եթե դրան ներկա են պատվիրակների ընդհանուր թվի կեսից ավելին: ՈՒԽ նախագահության անդամն ընտրվում է ներկաների թվի պարզ մեծամասնությամբ:
- 5.6. Անհրաժեշտ քվեներ չհավաքելու դեպքում առավելագույն ձայներ հավաքած երկու թեկնածուները անցնում են երկրորդ փուլ: Երկրորդ փուլում ընտրված է համարվում առավելագույն ձայներ հավաքած թեկնածուն:
- 5.7. ՈՒԽ նախագահությունը իր կազմից երկու տարի ժամկետով ընտրում է ՈՒԽ նախագահ, նախագահի տեղակալ(ներ), պատասխանատու քարտուղար, հանձնաժողովների նախագահներ:
- 5.8. ՈՒԽ նախագահ չի կարող առաջադրվել ՀՀ որևէ քաղաքական կուսակցությանը անդամակցող թեկնածու:
- 5.9. ՈՒԽ նախագահի ընտրությունը կատարվում է փակ, գաղտնի քվեարկությամբ: Նախագահի տեղակալի, պատասխանատու քարտուղարի, հանձնաժողովների նախագահների ընտրությունը կատարվում է բաց քվեարկությամբ, եթե այդ մասին այլ որոշում նախագահության կողմից չի կայացվում:
- 5.10. Ընտրված է համարվում այն թեկնածուն, ում օգտին քվեարկում են ներկաների կեսից ավելին: Անհրաժեշտ թվով ձայներ չհավաքելու դեպքում առավելագույն ձայներ հավաքած երկու թեկնածուները անցնում են երկրորդ փուլ: Երկրորդ փուլում ընտրվում է այն թեկնածուն, ում օգտին քվեարկում է ներկաների պարզ մեծամասնությունը:
- 5.11. ՈՒԽ նախագահության անդամների կեսից ավելիի փոփոխության պարագայում կազմակերպվում է ՈՒԽ նախագահի նոր ընտրություն:
- 5.12. Նախագահի տեղակալների, պատասխանատու քարտուղարի, հանձնաժողովների նախագահների թեկնածությունները առաջադրվում են նախագահության անդամների կազմից: Եթե նախագահության անդամներից հանձնաժողովի



նախագահ չի առաջադրվում կամ չի ընտրվում, ապա նախագահության որոշմամբ հանձնաժողովի նախագահ կարող է ընտրվել ՈՒԽ համագումարի պատվիրակ կամ ֆակուլտետային ՈՒԽ անդամ հանդիսացող ուսանող, որը ՈՒԽ նախագահության նիստին մասնակցում է խորհրդակցական ծայնի իրավունքով: Ընտրված է համարվում այն թեկնածուն, ում օգտին քվեարկում է ներկաների կեսից ավելին: Անհրաժեշտ թվով ծայներ չհավաքելու դեպքում առավելագույն ծայներ հավաքած երկու թեկնածուները անցնում են երկրորդ փուլ: Երկրորդ փուլում ընտրված է համարվում առավելագույն ծայներ հավաքած թեկնածուն:

- 5.13. ԵՊՀ ՈՒԽ նախագահը, ով հանդիսանում է նաև ԵՊՀ ՈՒԽ նախագահության նախագահ, ներկայացնում է ՈՒԽ-ն ԵՊՀ Գիտական խորհրդում, ռեկտորատում և համալսարանական այլ մարմիններում և կառույցներում, ՈՒԽ Համագումարում հանդես է գալիս Ուսանողական խորհրդի գործունեության մասին հաշվետվությամբ: Նա ներկայացնում է ԵՊՀ ՈՒԽ-ն և ուսանողությանը ՀՀ և արտերկրի բոլոր պետական և ոչ պետական մարմիններում, մասնավոր անձանց մոտ, տալիս է լիազորագրեր՝ գործելով սույն կանոնադրությամբ ՈՒԽ-ին վերապահված հարցերի շրջանակներում:
- 5.14. Սահմանված ժամկետը լրանալու կամ ԵՊՀ-ում ուսումն ավարտելու դեպքում, բացառությամբ ուսումը ասպիրանտուրայում շարունակելու դեպքից, ԵՊՀ ՈՒԽ նախագահը վայր է դնում իր լիազորությունները: Այդ դեպքում հայտարարվում են ՈՒԽ նախագահի նոր ընտրություններ:
- 5.15. ԵՊՀ ՈՒԽ նախագահի տեղակալը նախագահի բացակայության ժամանակ վերջինիս լիազորմամբ ողջ ծավալով կատարում է նախագահի պարտականությունները:
- 5.16. Պատասխանատու քարտուղարը ղեկավարում է քարտուղարության աշխատանքները, վարում համապատասխան արձանագրությունները:
- 5.17. ՈՒԽ նախագահությունը՝
  - ա/ միջոցներ է ձեռնարկում ՈՒԽ Համագումարի որոշումներն իրականացնելու համար,
  - բ/ Հաստատում է ՈՒԽ նախագահության, քարտուղարության, հանձնաժողովների և ֆակուլտետային ՈՒԽ-ների աշխատակարգերը,
  - գ/ վավերացնում է ՈՒԽ նախագահի կողմից կնքած պայմանագրերն ու համաձայնագրերը,
  - դ/ հանձնաժողովներում և ֆակուլտետների ՈՒԽ-ներում կատարվող աշխատանքների մասին լսում է զեկուցումներ,
  - ե/ կանոնակարգում է ԵՊՀ և ֆակուլտետների կառավարման (կոլեգիալ) բոլոր մարմիններում տարբեր մակարդակների ՈՒԽ-ների կողմից սովորողների (ուսանողներ, ասպիրանտներ) առաջադրման և ընտրության գործընթացը (ՀՀ օրենսդրությամբ և ԵՊՀ կանոնադրությամբ չկարգավորված հարցերը) և ընտրում է ԵՊՀ կառավարման և այլ մարմիններում սովորող անդամներին,

- ինչպես նաև որոշումներ է ընդունում կառավարման տարբեր մարմիններում ուսանողների ներկայացուցիչներին առնչվող այլ հարցերի վերաբերյալ,
- զ/ կարող է անվստահություն հայտնել ՈՒԽ նախագահին, նախագահության անդամներին և ֆակուլտետի նախագահներին,
- է/ կարող է լսել և լուծել ՈՒԽ իրավասությանը վերաբերող ցանկացած հարց, բացառությամբ Համագումարի իրավասությանը վերապահվածներից:
- 5.18. Ուսանողական խորհրդի նախագահությունում գործում են իրավական, արտաքին կապերի, լրատվության և հասարակայնության հետ կապերի, գիտակրթական, ֆինանսատնտեսական, մշակույթի, սոցիալական, սպորտի և ռազմահայրենասիրական ծրագրերի հանձնաժողովներ: Անհրաժեշտության դեպքում կարող են ստեղծվել ժամանակավոր հանձնաժողովներ:
- 5.19. ԵՊՀ ՈՒԽ նախագահությունը նիստեր է գումարում ամիսը առնվազն մեկ անգամ:
- 5.20. ԵՊՀ ՈՒԽ նախագահության նիստը իրավագոր է եթե ներկա են անդամների կեսից ավելին: Որոշումներն ընդունվում են ներկաների պարզ մեծամասնությամբ: Սույն կանոնադրության 5.17 կետի զ/ ենթակետով նախատեսված հարցերի քննարկման ժամանակ ՈՒԽ նախագահության որոշումներն ընդունվում են նախագահության անդամների 2/3-ի կողմ քվեարկելու դեպքում: Փակ, գաղտնի քվեարկության արդյունքում, եթե անդամների ընդհանուր թվի 2/3-ը պաշտպանում է անվստահության քվեն, ապա համապատասխան անձը վայր է դնում իր լիազորությունները: Անվստահության հարցի բարձրացումը կարգավորվում է ԵՊՀ ՈՒԽ աշխատակարգով:
- 5.21. ԵՊՀ ՈՒԽ նախագահի որոշմամբ կամ նախագահության անդամների 1/2-ի պահանջով կարող է հրավիրել ԵՊՀ ՈՒԽ նախագահության արտահերթ նիստ:
